ԵԽԽՎ-ն իր նշանակությունը կորցրել է, իսկ 90-ականներին երկխոսություն կար արեւմտյան եւ արեւելյան պետությունների միջեւ, դրանց զգալի մասը դարձել է ԵՄ անդամ, Բելառուսը, Ռուսաստանը հեռացվել են, Ադրբեջանը կաշկանդված է, սակայն դրանից վատ չի զգում, ԵԽԽՎ-ն դարձել է ԵՄ-ի կցորդը, չունի առանձին դիրքորոշում:

Կարդացեք՝ էջ 4

Բրիտանական The Telegraph-ը հոդված է հրապարակել՝ «Մելոնին Մակրոնին կտրում է Եվրոպայի շարժիչից, Իտալիայի վարչապետը միանում է Գերմանիայի կանցլերին՝ մայրցամաքն ավելի պահպանողական ուղղությամբ տանելու», որի իմաստն այն է, որ Եվրոպայում Ֆրանսիա-Գերմանիա դաշինքին փոխարինելու է գալիս Գերմանիա-Իտալիա դաշինքը:

Կարդացեք՝ էջ 5

Մի կողմից, լուտանքներ մրցակիցների հասցեին, մյուս կողմից՝ պատումներ սեփական հաղթանակների մասին: Նույնիսկ արդեն սկսել են խոսել, որ պատերազմի սխալներ չեն եղել: Շուտով, երեւի, կսկսեն ասել, որ մենք տարել ենք բարոյական հաղթանակ: Որ 120 հազար արցախցիների դեպորտացիան հենց այդ հաղթանակի վկայությունն է:

Կարդացեք՝ էջ 8


# Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 11 (4146), 4 փետրվար, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

ՔՊ-ական մեծամասնությունն ԱԺ կրթության, գիտության եւ մշակույթի հանձնաժողովում երեկ հավանության արժանացրեց «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը, որում վտանգավոր փոփոխություններ են ներառված: Ըստ դրանց՝ արգելվելու է տեսալսողական հաղորդումներում սահմանադրական կարգը բռնի տապալելու, պատերազմի, բռնության եւ դաժանության քարոզ պարունակող տեղեկատվության տարածումը, ազգային, ռասայական, սեռային, կրոնական ատելություն բորբոքելու, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն սերմանելը կամ նման նպատակ հետապնդող տեղեկատվության տարածումը, պոռնկագրության տարածումը, քրեորեն պատժելի կամ օրենսդրությամբ արգելված այլ արարքների կոչերի տարածումը, քրեական ենթամշակույթի քարոզ պարունակող ֆիլմերի եւ տեսալսողական հաղորդումների հեռարձակումը: Նշենք, որ այս արարքներն արդեն իսկ քրեորեն պատժելի են, ուստի իմաստ չկար ներառել տեսալսողական մեդիայի մասին օրենքում: Ակնհայտորեն, մութ նպատակով է դա արվում՝ TV-ների ազատությունը սահմանափակելու համար: Մեկ այլ վտանգավոր դրույթ էլ են ներդնում՝ արգելել օտարերկրյա ծրագրերով ՀՀ ներքաղաքական կյանքին միջամտող բովանդակության տարածումը, որը եւս կամայականորեն կմեկնաբանվի:

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հերթական գործուղմանն էլ է մեկնելու իր «լյուբիմչիկ» պատգամավորների ուղեկցությամբ: Նա այսօր եռօրյա այցով Մոսկվա է մեկնում: Պատվիրակության կազմում են նրան մշտապես ուղեկցող Հասմիկ Հակոբյանը, Սիսակ Գաբրիելյանը եւ Վաղարշակ Հակոբյանը, որն ԱԺ տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի հանձնաժողովի նախագահն է: Եվս 7 հոգի աշխատակազմից են: Իր հակառուսական հայտարարություններով հայտնի Ալեն Սիմոնյանն այցից հաշված օրեր առաջ «զադնի է դրել» երբեմնի կոշտ ձեւակերպումներից: Նախօրեին հարցազրույցում նա լրագրողին հորդորել է «հիբրիդային պատերազմ» ձեւակերպումից հրաժարվել, քանի որ «պատերազմ»-ը լավ տերմին չէ, եւ չի կրկնել ՔՊ-ական հայտարարությունները, թե Ռուսաստանը Հայաստանի դեմ հիբրիդային պատերազմ է վարում: Այցի շրջանակում նախատեսվում է հանդիպում ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի հետ, որն իր վերջին ասուլիսում անդրադարձել է ՀՀ իշխանությունների մտադրություններին՝ հիբրիդային պատերազմի անվան տակ Արեւմուտքից փող պոկելու եւ ռուսների դեմ հակաքարոզչություն իրականացնելու հարցերին:

## Կյանքը՝ հունիսից հետո

Երբեմն շարքային մարդիկ հարց են տալիս՝ ինչո՞ւ է Նիկոլ Փաշինյանը, ՔՊ-ն այսպես կատաղի մարտի ելել իր վերարտադրության համար: Ոչ մի միջոցի մեջ խտրություն չեն դնում՝ ազգային արժեքները, ժողովրդավարությունը, մեր պետության շահը տրորելով, ընդդիմադիրներին ոչնչացնելով, համակեցության եւ հասարակության հանդեպ հարգանքի տարրական նորմերը ոտնահարելով՝ առաջ են շարժվում: Ակնհայտ է, որ նպատակը հունիսին կայանալիք ընտրություններն են: Տպավորություն է, թե պատերազմ են հայտարարել սեփական ժողովրդին եւ որոշել են հաղթել նրան՝ ինչպես ոխերիմ թշնամուն կձգտեին հաղթել: Ո՞րն է խնդիրը, մի՞թե իշխանության մնալն այդպիսի գերնպատակ է, որ հանուն դրա կարող են մեր պետությունը վտանգել, մարդկայնության վերջին փշրանքներից հրաժարվել, միայն թե հասնեն այդ նպատակին: Բանն այն է, որ սա ոչ թե իշխանության համար պայքար է՝ բարձր աշխատավարձեր ստանալու, պետության հաշվին անդարդ ապրելու, կյանքը վայելելու, ինչպես թվում է շատերին, այլ կենաց-մահու պայքար, որովհետեւ նրանք վստահ են, որ իշխանության այլընտրանքն ընդդիմություն դառնալը չէ, այլ բանտում հայտնվելը, նույնիսկ՝ կյանքից զրկվելը: Նրանց թվում է, թե այս պարագայում բանաձեւը մեկն է՝ «մահ կամ իշխանություն»: Դա է պատճառը, որ այսպես հուսահատ պայքարի մեջ են մտել եւ պատրաստ են ամեն ինչի, միայն թե վերընտրվեն, չկորցնեն իշխանությունը: Դրա համար ունակ են ոչ միայն խեղկատակության, բռնությունների գնալ, թշնամու ոտքը համբուրել, անգամ իրենց հոգին սատանային ծախել: Որովհետեւ՝ ո՞վ չի ուզում ապրել, ո՞վ կհամաձայնի կառավարական ամառանոցը փոխել ԱԱԾ պադվալի հետ: Բայց ես վստահ եմ՝ այդ վախերը խիստ չափազանցված են: Իշխանությունից հետո էլ կյանք կա, եւ բոլորովին պարտադիր չէ, որ դա ճաղերի ետեւում լինի:

*Մինչ իշխանությունը թեժ նախընտրական պայքարի մեջ է եւ 24/7 ռեժիմով աշխատում է ընդդիմության դեմ, ԱԺ ընդդիմադիր 2 խմբակցությունների պատգամավորները՝ «Հայաստան» դաշինքից Գառնիկ Դանիելյանը եւ «Պատիվ ունեմ»-ից Հայկ Մամիջանյանը, գործուղման են մեկնել Շվեդիա՝ փետրվարի 1-3-ը: Պատվիրակության ղեկավարը ընդդիմությանն ամենից շատ վիրավորած Ռուբեն Ռուբինյանն է: Կազմում են Վլադիմիր Վարդանյանը, Լուլուն՝ Լուսինե Բաղալյանը: «Այցի ընթացքում կողմերը քննարկել են խորհրդարանական վերահսկողության, ընտրողների եւ քաղաքացիական հասարակության հետ հաղորդակցության ու շփումների... հարցեր: Աշխատանքային ճաշ ձեւաչափով հանդիպումներ են ունեցել Ուփսալայի նահանգապետ Ստեֆան Ատեֆալի, Շվեդիայի Ռիկսդագի նախկին նախագահ Բյորն ֆոն Սիդովի հետ, այցելել են ՇԹ ազգային աուդիտի գրասենյակ»: Սակայն ԱԺ կայքի լուսանկարներից երեւում է, որ ընդդիմադիրներն ամաչում են՝ Դանիելյանը թաքնվել է մի շվեդի թիկունքում, Մամիջանյանի գլխի մի մասն է երեւում:*

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅԱՆԱԼՈՒ Է ՔՊ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

Փետրվարի 12-ից կմեկնարկեն ՔՊ նախընտրական ընտրությունները, որոնք կընթանան եռօրյա ժամկետում: Բոլոր մարզերի եւ Երեւանի ՔՊ տարածքային կառույցների անդամները՝ ՔՊ համաժողովի պատվիրակները, էտապ-էտապ ընտրություն կկատարեն, որպեսզի ձեւավորեն ՔՊ նախընտրական ցուցակը: Ընտրությունը կայանալու է ՔՊ կենտրոնական գրասենյակում: Պատվիրակները հերթով կգան գրասենյակ եւ առաջադրված ու ՔՊ վարչության կողմից գրանցված 280 թեկնածուից ընտրություն կկատարեն 50 թեկնածուի օգտին: Ապա ցուցակը կձեւավորվի ռեյտինգային կարգով՝ ըստ հավաքված ձայների: Շատ ձայներ հավաքած անձինք՝ ցուցակի վերեւի հատվածում: Եռօրյա ընտրության արդյունքներն ամփոփելուց հետո կրկին օր կսահմանեն, որպեսզի այս անգամ էլ առաջին 50 թեկնածուի միջեւ ընտրեն, նաեւ՝ վարչապետի թեկնածուին, որից հետո մարտին համաժողով կհրավիրեն, որը կհաստատի համաժողովի ընտրած ցուցակը: ՔՊ-ում բոլորը շունչները պահած սպասում են փետրվարի 12-15-ին. բանն այն է, որ Փաշինյանն անգամ ամենամտերիմներին երաշխիք չի տվել, որ իրենք կունենան իրենց տեղը, բոլորին ասվել է՝ գնացեք, ձեր գլխի ճարը տեսեք:

GRAWE

Վարչապետ Փաշինյանի հանդիպումը GRAWE ընկերության գլխավոր տնօրեն Կլաուս Շայտեգելի եւ C-Quadrat ներդրումային խմբի կառավարիչ խորհրդի նախագահ Անդրեաս Վիմմերի գլխավորած պատվիրակության հետ, որը տեղի է ունեցել փետրվարի 2-ին, ներկայացվում է



# ԻՆՉՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՉԵՆ ՎՍՏԱՀՈՒՄ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻՆ

**Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ**
**syuzan.simonyan@hraparak.am**

որպես մեր երկրի միջազգային ֆինանսական շուկային ինտեգրվելու քայլ: Պաշտոնական հաղորդագրության մեջ ասվում է, որ ընդունելության ժամանակ Փաշինյանը նշել է՝ «պատրաստ է կառուցողական համագործակցության»: «Միաժամանակ, վարչապետն ընդգծել է մեր երկրում C-Quadrat ներդրումային խմբի արդյունավետ գործունեության փաստը»,- ասված է կառավարության պաշտոնական հաղորդագրությունում:

Ավստրիական GRAWE ընկերության մասին հայտնի է, որ այն գործում է 1828 թվականից, զբաղվում է ապահովագրությամբ, ֆինանսական ծառայություններով, ակտիվների կառավարմամբ, գործում է Կենտրոնական, Արեւելյան եւ Հարավ-արեւելյան Եվրոպայում: Հիշեցնենք. անցյալ տարեվերջին հայտարարվել էր, որ ավստրիական GRAWE Group-ը եւ C-Quadrat խումբը պայմանավորվածություն են ձեռք բերել հայկական ապահովագրական LIGA ընկերության 100 տոկոս բաժնետոմսերի ձեռքբերման մասին:

GRAWE ապահովագրականի մուտքը Հայաստան որոշ շրջանակներում լավատեսական սպասումներ է առաջացրել: Պետական եկամուտների կոմիտեի նախկին նախագահ **Դավիթ Անանյանը** վստահեցնում է, որ այն օգտակար է Հայաստանի համար, բայց կան պայմաններ: «Խորքային առումով տեղյակ չեմ ընթացող գործընթացներից, բայց, ըստ հրապարակումների, կարող եմ ենթադրել, որ բավականին իրատեսական եւ օգտակար, արդյունավետ ուղղություն է՝ միջազգային ապահովագրական խմբի մուտքը կամ ընդլայնումը Հայաստանում՝ ԿԲ-ի հետ ընթացող քննարկումներով եւ հնարավոր գործարքի կոնտեքստով (LIGA): Ինտեգրման պոտենցիալը կա, հատկապես՝ վերաապահովագրության, ռիսկերի կառավարման եվրոպական ստանդարտների եւ ֆինանսական համակարգի խորացման մասով, բայց արդյունքը կախված է. առաջինը՝ իրական ներդրումային պարտավորություններից, երկրորդը՝ ԿԲ կարգավորման խստությունից, երրորդը՝ շուկայում մրցակցային ու սպառողապաշտպան գործելակարգերի պահպանումից»,- ասաց նա:

Եթե GRAWE ընկերության առումով գնահատականներ տալը դեռ վաղ է, ապա C-Quadrat-ին եւ, առհասարակ, ներդրումային կուտակային ֆոնդերին Հայաստանում այնքան էլ չեն վստահում: Եվ ոՐն է այդ արդյունավետ գործունեությունը, գոնե C-Quadrat-ի դեպքում հասկանալի չէ: Բավական է հիշատակել կուտակային կենսաթոշակի հաշիվների հետ կապված 2022 թվականի հոկտեմբերի սկանդալային բացահայտումը, երբ քաղաքացիներն ահազանգում էին, որ իրենց կուտակային կենսաթոշակային հաշիվների մնացորդները նվազել են՝ նույնիսկ այն դեպքում, երբ աշխատավարձից վճարված գումարներն ավելանում էին եւ պետք է կուտակվեին: Կենսաթոշակային հաշիվներում մնացորդի նվազումը մասնագետները բացատրեցին դոլարի համեմատ դրամի կտրուկ արժեւորմամբ, գնաճով ու համաշխարհային տնտեսությունում ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված անորոշություններով: Բայց քաղաքացիները սրան չհավատացին եւ ինչպես հավատան, եթե ներդրումային հիմնադրամների խնդիրների մասին անգամ գիտական աշխատություններ կան արդեն:

Դրանցից մեկի համաձայն, կուտակային համակարգի ներդրման առաջին 8 տարում, այսինքն՝ 2014-2022 թթ., երբ Հայաստանում գնաճը 40 տոկոս է եղել, կուտակային ֆոնդերին քաղաքացիների կողմից մուծված գումարներն ավելացել են ընդամենը 2 տոկոսով: Սա նշանակում է, որ եթե, ենթադրենք, ամեն տարի անձը 220 հազար մուծում է ֆոնդին, ապա 2014-2022 թթ. նրա մուտքագրած մոտ 2 մլն դրամը դարձել է ընդամենը 2 մլն 40 հազար: Սա բանկային ավանդների եկամտաբերությունից ցածր է: Եթե այդ նույն գումարը ներդրվեր բանկերում, ապա կստացվեր 3-3,5 մլն: Ուրեմն, ոՐմ գրպանն են մտել մնացած փողերը: Եվ, առհասարակ, ոՐմ համար է արդյունավետ վարչապետի ասած «գործունեությունը»:

Իհարկե, պաշտոնական տեղեկությունները սրան հակասում են: ԿԲ տվյալներով, 2025 թվականին պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվները կազմել են 1տրիլիոն 413 մլրդ դրամ, իսկ մինչ այդ՝ 2024 թվականին, մոտ 800 մլրդ: Այնուամենայնիվ, խնդրահարույց է մնում այն, որ ներդրումները կատարվում են ոչ թե տնտեսության իրական հատվածում, այլ ֆինանսական տարբեր գործիքներում, պետական պարտատոմսերում, ինչն ավելացնում է Հայաստանի պետական պարտքը: Այսինքն, քաղաքացին մուծում է ֆոնդին՝ իր պետության պարտքն ավելացնելու համար: Վարչապետի եւ տարբեր ֆոնդերի համագործակցության իրական ձեւաչափը, ձեռք բերված պայմանավորվածությունները, ներդրումների բովանդակությունը հանրային դիսկուրսից դուրս են ու անհայտ, եւ կասկած կա, որ այս «արդյունավետ գործունեությունն» այնքան էլ թափանցիկ չէ ու ոչ համարժեք հանրային շահին:

# ԳԱՎԱՌՈՒՄ ՉԵՆ ՄՈՌԱՑԵԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԽՈՍՏՈՒՄԸ, ՈՐՆ ԱՅԴՊԵՍ ԷԼ ԹՂԹԻ ՎՐԱ ՄՆԱՑ

**Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Հայաստանի իշխանությունների գործելաոճը մեր հանրության համար արդեն նորություն չէ: Այնքան, ինչքան սուտ ասվել է 2018 թվականից սկսած, Հայաստանում չի ասվել վերջին 30-35 տարում: Խոստումներ են հնչել, թե պետք է տասնյակից ավելի գործարաններ կառուցվեն՝ կենցաղային տեխնիկայի արտադրության գործարան, հեռուստացույցների, վերելակների, գազաբալոնների արտադրության, շաքարի գործարաններ, ավտոբուսների, նույնիսկ ինքնաթիռների արտադրական հզորություններ, բամբակի, տեքստիլի արտադրության գործարաններ: Անգամ կոկորդիլոսների բուծման ֆերմա էին ուզում բացել, տարբեր մեգանախագծեր, որոնց մասին հասարակությունն անգամ մոռացել է:

Բայց որոշ բան մարդիկ հիշում են: Օրինակ՝ Գավառում շատ լավ հիշում են, թե 2018թ. նոյեմբերի 29-ին՝ խորհրդարանական արտահերթ ընտրություններից առաջ, ինչ էր խոստանում Նիկոլ Փաշինյանը, որը «գրվեց սառույցին»: Իսկ Փաշինյանը Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառ քաղաքում հպարտ քաղաքացիներին խոստացավ, որ առաջիկայում միլիոնավոր դոլարների ներդրումներ կլինեն, եւ Գեղարքունիքի մարզի Ծովազարդ համայնքում տեքստիլի գործարան կբացվի, որտեղ բամբակից թել կմանեն: Սկզբնական շրջանում ընդամենը 400-600 հպարտ քաղաքացիներ կաշխատեն այդ գործարանում, հետագայում այդ թիվը կկրկնապատկվի՝ 1200 աշխատատեղ կբացվի:

Հիմա մանրամասն անդրադառնանք այդ խոստմանը: 2018 թվականին «Ուզբեկ տեքստիլ գրուպ» ընկերությունն Արմավիրի մարզի սահմանամերձ Արաքս համայնքում «Բամբակի մշակման եւ վերամշակման» ծրագիր էր իրականացնում: Ընկերության տնօրեն Գագիկ Խաչիկյանը հավաստիացնում էր, որ բարձրորակ սերմացուի եւ անհրաժեշտ տեխնիկայի ներկրումից հետո՝ գարնանը մեկնարկել են բամբակի դաշտերի վարուցանքի աշխատանքները, եւ նախատեսվում էր շուրջ 128 հա հողատարածքից բամբակի բերքահավաք անել, որին էլ կհաջորդեր վերամշակման փուլը: Վերամշակման համար էլ ընտրվել էր Գեղարքունիքի մարզի Ծովազարդ համայնքը, որտեղ կառուցվելու էր տեքստիլի գործարան: 7 տարի է անցել այդ խոստումից, սակայն գործարանը ոչ միայն չի աշխատում, այլեւ նման գործարան չի էլ եղել:

Թե ինչ եղավ տեքստիլի գործարանի ճակատագիրը, ուր մնացին միլիոնավոր դոլարների ներդրումները եւ 1200 աշխատատեղերը, հարցրինք Գավառ համայնքի Ծովազարդի վարչական ղեկավար **Արամայիս Ենգոյանին**: «Այդ ֆաբրիկան՝ իր տարածքով, մեր համագյուղացի Փայլակ Հայրապետյանին էր պատկանում: Ասում էին, որ ինչ-որ գործարար՝ Գագիկ Խաչիկյան անունով, պիտի գա, գործարանը բացի, էդպես էլ ոչ մի բան չարեց: Բայց էնպես չէր, որ հենց կտտցներ, գործարանը խոդի կտար: Նորմալ շենք էլ չէ, անգարատիպ հավաքած շինություն է: Հետո էդ ֆաբրիկան սնանկ ճանաչվեց, դրանից հետո մեր համագյուղացին առավ: Հյուրանոցային նախագիծ կամ նմանատիպ բաներ է ուզում անել»:

Խոսքը հայտնի գործարար Փայլակ Հայրապետյանի մասին է, որը Նավասարդ Կճոյանի եւ Աշոտ Սուքիասյանի աֆրիկյան գործարքների արդյունքում սնանկացավ եւ տարիներ շարունակ փորձում էր դատական կարգով իր գումարները հետ բերել: Մենք տեղեկացանք, որ Հայրապետյանին պատկանող այդ տարածքը՝ իր շինությունով, գնել է Ծովազարդ համայնքի բնակիչ Կարեն Գալոյանը, որի «ԱՔՎԱՏԻԿ» ՍՊԸ-ի տնօրենն է: Իսկ ինչՐվ է հայտնի «ԱՔՎԱՏԻԿ» ՍՊԸ-ն: Հակակոռուպցիոն դատարանում 2025 թվականի սեպտեմբերի 17-ին սկսվեց ՀՀ զինված ուժերի նախկին բարձրաստիճան զինվորականի՝ Հայկազ Բաղմանյանի գործի քննությունը: Բաղմանյանին մեղադրանք էր առաջադրվել փողերի լվացման, ապօրինի ձեռնարկատիրական գործունեության եւ գույքի ու եկամուտների չհայտարարագրման համար: Մեղադրանքի համաձայն, Բաղմանյանը 2001 թվականից իր վստահված անձանց, այդ թվում՝ իր հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող, ընկերության մեկ այլ բաժնետեր եւ տնօրեն Կարեն Գալոյանի օժանդակությամբ մասնակցել է «ԱՔՎԱՏԻԿ» ՍՊ ընկերության կառավարմանը: Ըստ մեղադրանքի՝ Բաղմանյանն արտոնություններ եւ առավելություններ է տրամադրել այդ կազմակերպությանը՝ օգտագործելով իր պաշտոնական դիրքից բխող ազդեցությունը, հեղինակությունը եւ կապերը: Այս ազդեցությունը ենթադրաբար հանգեցրել է նրան, որ «ԱՔՎԱՏԻԿ» ՍՊԸ-ն առանց խոչընդոտների հաղթող է ճանաչվել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սննդամթերք մատակարարելու մրցույթներում: Նախկինների հետ փոխկապակցված այս ընկերությունն էլ պետք է մասնակցեր տեքստիլի գործարանի ստեղծմանը, որը 2018-ին խոստանում էր Նիկոլ Փաշինյանը, եւ որն այդպես էլ չի իրականացվել:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

# ՓԱՇԻՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՉԷՐ ԳԱԼԻՍ ՆՐԱՆԻՑ, ՈՐ ՆԱ ԹՄԲՈՒԿ ՉԷՐ ԽՓՈՒՄ

Խորհրդարանական ընտրություններին մնացել է ուղիղ հինգ ամիս, սկսվել է վերադասավորումների փուլը, եւ օրեցօր ավելի հստակ է դառնում, թե ինչ կոալիցիաներով եւ դաշինքներով են տեղի ունենալու հերթական խորհրդարանական ընտրությունները, եւ այս ամենին զուգահեռ՝ դեռ նախորդ տարվանից սկսվել է ոչ պաշտոնական նախընտրական քարոզարշավը, որին լծվել է եւ իշխանությունը, եւ որոշ չափով՝ ընդդիմությունը: Թեմայի մասին զրուցել ենք քաղտեխնոլոգ **Արմեն Բադալյանի** հետ:

**- Թե՛ իշխանությունները եւ թե՛ ընդդիմադիր ուժերը սկսել են նախընտրական քարոզարշավը: Նիկոլ Փաշինյանը նվագում է, երգում-պարում, թոշակների բարձրացման մասին սուտ խոստումներ տարածում, փորձում է Հայ առաքելական եկեղեցին «բարենորոգել», իրականում՝ քանդել, ընդդիմությունն էլ իր հերթին մարզեր է այցելում, Ռոբերտ Քոչարյանը մի քանի օր առաջ մամուլի ասուլիսով հանդես եկավ՝ Մասիս սարի նկարի ֆոնին, նոր քաղաքական ուժեր են ձեւավորվել՝ Արման Թաթոյան, Նինա Կարապետյանց, Նաիրի Սարգսյան եւ այլն: Ըստ Ձեզ՝ ինչպիսի՞ նախընտրական քարոզչություն է ընթանում այս ուժերի կողմից, ի՞նչ պատկեր ունենք ներկա պահին, եւ ի՞նչ բացեր ունեն պառլամենտական ընտրություններին հայտ ներկայացրած քաղաքական ուժերը:**

- Նրանք՝ բոլորը, իրենց պատկերացմամբ, անցկացնում են նախընտրական կամպանիա՝ ով ինչպես պատկերացնում է եւ ով ինչ գաղափար ունի այդ գործընթացի վերաբերյալ: Կան բազմաթիվ թերություններ, սակայն ես այդ մասին չեմ խոսի, որովհետեւ եթե խոսեմ նրանց թերություններից, ապա նրանք կվերացնեն այդ թերությունները, իսկ ես չեմ ցանկանում որեւէ քաղաքական ուժի անվճար խորհրդատվական ծառայություններ մատուցել: Այդ պատճառով չեմ խոսի թերությունների մասին: Բայց ասել, որ այս ընտրական կամպանիան էապես տարբերվում է մյուսներից՝ սկսած 1995-ից, սուտ կլինի: Շատ թերի, թույլ ու անմակարդակ նախընտրական կամպանիա են անցկացնում, որովհետեւ չունեն տարրական գիտելիքներ նախընտրական պրոցեսների ռազմավարության մասին, ընդհանրապես գաղափար չունեն: Խոսում են ընդդիմադիր էլեկտորատների մասին, խոսում են ընդդիմադիր-իշխանություն մասնակցության մասին, առանց հասկանալու, որ ընտրություններին մասնակցելու են իշխանությունը եւ տարբեր ուժեր: Մարդիկ, ի վերջո, տարբեր սկզբունքներով են մասնակցում ընտրություններին, եւ նման հայտարարությունները վնասում են պրոցեսներին: Նախընտրական պրոցեսները մակարդակի առումով մնացել են 90-ականներում:

**- Նիկոլ Փաշինյանը բենդ է ձեւավորել, նվագում է, երգում, պարում: Այս ամենը օգնո՞ւմ է նրան, թե՞ հակառակը՝ վնասում:**

- Նիկոլ Փաշինյանի այդ քայլն ուղղված է իբրեւ թե երիտասարդ լսարանին, քանի որ ընտրազանգվածի մեջ պակաս տեղ չի զբաղեցնում երիտասարդությունը: Նա, իմանալով, որ իր վարկանիշը բավականին ընկել է, փորձում է այս քայլերով ձայներ հավաքել, սակայն դա նրան օգուտ չի տալու, քանի որ ամեն բան շատ արհեստական է արվում: Երիտասարդներին չես կարող միայն քանոնով եւ թմբուկով գրավել, ոչ էլ ռոք երգիչ ձեւանալով: Ամեն դեպքում, այս հարցին ավելի հստակ պատասխանելու համար պետք է նախ սոցիոլոգիական հարցում անցկացնել, եւ հետո՝ շատ բան կախված է նաեւ նրանից, թե ընդդիմությունն ինչպես այս ամենին հակառակ փիառ քայլեր կանի: Հաշվի առնելով, որ երիտասարդների մոտ թմբուկ խփելով չի փոխվելու կարծիք, քանի որ Փաշինյանի նկատմամբ բացասական վերաբերմունքը չի գալիս նրանից, որ նա թմբուկ չէր խփում, իսկ հիմա՝ խփում է: Պատճառը լրիվ այլ տեղում է, հետեւաբար, այս ամենը Փաշինյանին որեւիցե օգուտ չի բերելու: Դա սխալ տեխնոլոգիա է:

**- Իսկ մյուս ուժերը:**

- Մյուսներն էլ շատ ստանդարտ տեխնոլոգիաներ են կիրառում: Հավաքվում են, գնում են մարզեր, դահլիճներ են լցնում, բնակիչների հետ են խոսում եւ չգիտես քանի հազարերորդ անգամ խոսում են այն մասին, թե ինչքան վատն է Նիկոլ Փաշինյանը, եւ որքան վտանգավոր են նրա բազմաթիվ սխալները: Իրենց թվում է, թե մարզերի բնակիչներն անտեղյակ են, չեն տեսնում Փաշինյանի սխալները եւ իրենցից պետք է միայն լսեն: Մարդիկ գաղափար չունեն, թե էլեկտորալ ինչ խմբեր կանում բազմաթիվ խնդիրներ են լուծում: Ընտրությունները միշտ չէ, որ միտված են իշխանափոխության: Ընտրություններով տարբեր ուժեր տարբեր խնդիրներ, հարցեր են լուծում: Կան ուժեր, ովքեր հենց ձայներ փոշիացնելու խնդիրն են լուծում, որպեսզի իշխող ուժը շահի դրանից: Դրանք այն քաղաքական ուժերն են, որոնք չեն հավաքելու անցողիկ չորս տոկոս շեմը, բայց

կան, եւ ում ինչպես կարելի է գրավել: Բազմաթիվ հարցեր կան, որոնք Հայաստանի քաղաքական ուժերի համար հասանելի չդարձան, քանի որ ընտրական կամպանիան այդպես էլ չզարգացավ:

**- Շատ է խոսվում ձայներ փոշիացնող ուժերի մասին: Դրանք ո՞ր ուժերն են, ըստ Ձեզ:**

- Կա այդպիսի տեխնոլոգիա: Կան դրածո թեկնածուներ: Նրանք իրափոխարենը նրանց չանցած ձայների մեծ մասն անցնելու է առաջին տեղը զբաղեցնող ուժին, այդ լինի ՔՊ-ն, թե Քոչարյանը: 2021 թվականին 10-12 տոկոս ձայն փոշիացավ եւ արժանացավ այդ ճակատագրին: Այդ ձայները լրիվ անցան ՔՊ-ին: Կան նաեւ ուժեր, որոնք մեծ ամբիցիաներ ունեն, եւ իրենց թվում է, թե աշխարհն առանց իրենց մասնակցության կարող է շուռ գալ:

**Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ 2 ԻՆՔՆԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԱՆՁ ԿԱ

Օրեր առաջ գրել էինք, որ ԱԺ առողջապահության մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնից Հռիփսիմե Հունանյանին հրաժարական պարտադրելուց հետո իշխող թիմն աննախանձելի վիճակում է հայտնվել, քանի որ չունեն հանձնաժողովի նախագահի նոր թեկնածու ու տեւական ժամանակ փնտրտուքի մեջ էին՝ ում առաջադրել, որ ճիշտ ընկալվի: Բանն այն է, որ հանձնաժողովի նախագահի տեղապահ էլ չեն կարող նշանակել, քանի որ հանձնաժողովը չունի նախագահի տեղակալ, որը, ըստ ԱԺ կանոնակարգի, մի քանի ամիս կկատարեր նախագահի լիազորությունները՝ մինչեւ նոր ընտրությունները, քանի որ հանձնաժողովի նախագահի նախկին տեղակալ Լուսինե Բադալյանը նախագահ Նարեկ Զեյնալյանի հեռանալուց հետո հրաժարվել է այդ պաշտոնից: Հիմա չնայած Զեյնալյանը նոր պաշտոնի՝ ԲԿ տնօրեն է նշանակվել, Բադալյանի նեղվածությունն էլ հարազատ թիմից անցել է, բայց ներսում կարծում են, որ նրա թեկնածությունն այնքան էլ ճիշտ չի ընկալվի, քանի որ ամիսներ առաջ տեղակալի կարգավիճակից է նույնիսկ հրաժարվել:

Հանձնաժողովի կազմում այլ հարմար թեկնածու ՔՊ-ում չեն տեսնում: Հիշեցնենք, որ Հռիփսիմե Հունանյանին ընտրելիս թիմն ընտրություն էր կատարել նրա եւ Զարուհի Բաթոյանի միջեւ, վերջինիս օգտին ընդամենը 8 կողմ էր եղել, այսինքն՝ նրա թեկնածությանն էլ չեն կարող վերադառնալ: Առաջարկել են «Քաղաքացիական պայմանագրի» պատգամավորներին՝ ինքնառաջադրվել, ինքնառաջադրումների վերջնաժամկետ են սահմանել փետրվարի 1-ը:

Մենք տեղեկացանք, որ այս ընթացքում երկու պատգամավոր է ինքնառաջադրվել՝ Առողջապահության մշտական հանձնաժողովի անդամ, ընդամենը մի քանի ամիս առաջ մանդատ ստացած պատգամավոր Վանիկ Օհանյանը՝ Վանաձորից, որը փոխարինել է Լոռվա մարզպետ նշանակված Արեն Մկրտչյանին եւ, ի դեպ, բժշկական կրթություն ունի՝ Վանաձորում գործող «Օհանյան» ատամնաբուժական կլինիկայի հիմնադիրն է: Մյուս առաջադրվածն էլ, որքան էլ տարակուսելի հնչի, Տրդատ Սարգսյանն է՝ Վայոց Ձորի նախկին մարզպետը, որի անունը շոշափվում էր տարիներ առաջ փոխգնդապետին ծեծելով կոմայի մեջ գցելու պատմության շրջանակներում, եւ որի պատճառով նա հրաժարական տվեց մարզպետի պաշտոնից: Տրդատ Սարգսյանը Պետահիրավական հանձնաժողովի անդամ է, նրա պաշտոնական կենսագրության մեջ նշված է, որ ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետի «Թյուրքագիտություն» եւ «Իրավագիտություն» ֆակուլտետներն է ավարտել, առողջապահության ոլորտի հետ կապ չունի, թեպետ թիմում կատակում են, որ եթե նախարարը մասնագիտությամբ իրավաբան է, ինչո՞ւ չի կարող հանձնաժողովի նախագահն էլ նույն մասնագիտությունն ունենալ: ՔՊ-ում շատերի կողմից ընդունելի Տրդատ Սարգսյանը, ըստ ամենայնի, հույս ունի, որ թիմը նախապատվություն կտա իրեն, մանավանդ որ Վանիկ Օհանյանը լավ նոտայից չսկսեց պատգամավորական գործունեությունը եւ թիմին դրեց անհարմար դրության մեջ՝ վաստակելով թշնամիներ: Մենք գրել էինք, որ ամռանը ստանալով պատգամավորի մանդատը, նա սեպտեմբերին մեկնարկող նստաշրջանին ներկայանալու եւ պատգամավորական երդում տալու փոխարեն մեկնել էր ԱՄՆ: Թիմում ամաչում էին խոստովանել այդ փաստը եւ կոծկում էին՝ ասելով, թե, առողջական խնդիրներով պայմանավորված, նստաշրջանի մեկնարկին խորհրդարան չի եկել: Ի դեպ, դեռ սեպտեմբերին էին խոսում, որ Վանիկ Օհանյանի թեկնածությունը կդիտարկեն առողջապահության հանձնաժողովի նախագահի այն ժամանակ դեռեւս թափուր պաշտոնում, եթե չլիներ նրա անպատասխանատու վերաբերմունքը պատգամավորի կարգավիճակի հանդեպ: Նաեւ այդ պատճառով թիմն ընտրեց անդիպլոմ

Հռիփսիմե Հունանյանին, որին ՔՊ ղեկավարությունը երկու շաբաթ առաջ պարտադրեց հրաժարվել ոչ միայն զբաղեցրած պաշտոնից, այլեւ հայտ չներկայացնել ՔՊ նախընտրական ցուցակում ընդգրկվելու: Այդ պատժի պատրվակը Հունանյանի՝ ԱԺ ամբիոնից արված հայտարարությունն էր, որ զինվորներից բացի բանակին նաեւ գլուխներ են պետք: Իրականում, սակայն, ասում են՝ պատճառն ավելի խորքային է, եւ Հունանյանը ներկուսակցական խարդավանքների, ինչպես նաեւ նախընտրական քարոզչության է զոհ գնացել: Վերջերս էլ Նիկոլ Փաշինյանը հրապարակավ շնորհակալություն հայտնեց նրան՝ գիտակցված քայլի համար:

**Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ**
**lusine.shahverdyan@hraparak.am**

# ԹՈՂ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԱՆ, ՏԵՍՆԵՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿՈՐԾԱՆՎԵՑ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՅԼ ՈՉ ԹԵ ԵԿԵՂԵՑԻՆ

*«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Սուրեն Զոլյանն** է:*

**- ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը փետրվարին կայցելի Հայաստան եւ Ադրբեջան. այս մասին Truth Social հարթակում գրել է անձամբ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը: Ի՞նչ ակնկալել այս այցից: Ինչի՞ մասին է այն: Իշխանությունները բավականին ոգեւորված են սպասվելիք այցով, այն ի՞նչ նշանակություն կունենա, ըստ Ձեզ, Հայաստանի համար:**

- Անկեղծ ասած, ես այս այցը կապում եմ Թրիփի միջանցքի կամ, ավելի ճիշտ՝ Զանգեզուրի միջանցքի հետ, ճիշտ կլինի այն անվանել հենց այդպես, քանի որ Ադրբեջանը, Թուրքիան եւ էլի մի շարք պետություններ ոչ թե Թրիփի միջանցք են անվանում, այլ՝ Զանգեզուրի միջանցք: Դավոսում եւս տեղի ունեցավ շատ կարեւոր հանդիպում: Ալիեւը ոչ միայն Թրամփի հետ հանդիպեց, այլեւ՝ Դավոսի հիմնական կազմակերպիչների հետ: Խոսվել է շատ կարեւոր ծրագրերի մասին, իսկ Հայաստանը խաղացողներից չէ: Թեեւ պաշտոնապես հայտարարվել է, որ Վենսը գալիս է Հայաստան՝ ինչ-ինչ էներգետիկ հարցերով զբաղվելու համար, սակայն ես կարծում եմ, որ այդ այցը միջանցքի հետ է կապված, այն նաեւ կապված է Միջին Ասիայի, Թուրքիայի հետ, սակայն այդ մասին գրեթե չի խոսվում:

**- Հայաստանի իշխանությունները ցնծության մեջ են, գոհ են նաեւ Թրիփի ուղու վերաբերյալ պայմանավորվածություններից, ի՞նչ խնդիր կա այդ դեպքում, արդյոք դա միջանցք է լինելու, ոչ թե՝ ճանապարհ:**

- Հայաստանի համար ոչ մի խնդիր չի կարող լինել, որովհետեւ Հայաստանը խաղացող չէ: Ուղղակի քանի որ ինչ-ինչ հարցեր պետք է լուծվեն, գոնե ձեւի համար Հայաստան էլ պիտի գան, գոնե ձեւական առումով Հայաստանը պետք է ներգրավված լինի: Սա ավելի շատ պրոտոկոլային հարց է, բոլոր դեպքերում՝ Հայաստանի վարչապետը մեզ՝ բոլորիս է ներկայացնում, սակայն նա իր ստացած «կարկանդակների» համար բազմիցս շնորհակալություն է հայտնում, որովհետեւ այլ դերակատարում չունի, նրա գործը միայն երախտագիտություն հայտնելն է:

**- ԵԽԽՎ վերջին զեկույցն ու արձանագրությունը խոսում են այն մասին, որ Հայաստանի իշխանությունները փայլուն կատարում են իրենց աշխատանքը: ԵԽԽՎ-ն նրանց համարում է ժողովրդավար, թեպետ մի քանի խնդրի անդրադարձել էին, սակայն, մեծ հաշվով, Փաշինյանի իշխանությանը հավանություն էին տվել՝ իրենց եզրակացությամբ: Ո՞րն է նրանց հիացմունքի եւ աջակցության պատճառը: Ինչո՞ւ է ԵԽԽՎ-ն այս դիրքերից հանդես գալիս:**

- Ցավոք սրտի, եթե խոսքը գնում է ԵԽԽՎ-ի մասին, ապա պետք է արձանագրենք, որ այն վաղուց իր նշանակությունը կորցրել է՝ ինչո՞ւ. որովհետեւ 90 թվականին այն նշանակությունը, որ կառույցն ուներ՝ ինչ-որ ձեւով երկխոսություն էր գնում արեւմտյան եւ արեւելյան պետությունների միջեւ, վաղուց արդեն մնացել է անցյալում: Զգալի մասն այդ պետությունների դարձել է ԵՄ անդամ, իսկ մի մասը, օրինակ՝ Բելառուսը, Ռուսաստանի Դաշնությունը, հեռացվել են այդ կազմից, Ադրբեջանը թեպետ կաշկանդված է, սակայն դրանից վատ չի զգում, մի խոսքով՝ ԵԽԽՎ-ն դարձել է ԵՄ-ի կցորդը եւ չունի առանձին դիրքորոշում: Ինչ վերաբերում է Հայաստանին գովեստի խոսքեր շռայլելուն, ապա դա ոչ թե Հայաստանի շահերից է բխում, այլ պարզապես նման քայլերով Հայաստանին փորձում են հակառուսական քայլերի մաս դարձնել:

**- Բայց մի՞թե Եվրոպայում չեն տեսնում, թե ինչ է կատարվում ՀՀ ներքաղաքական կյանքում: Մենք ամեն օր արձանագրում ենք, որ Նիկոլ Փաշինյանը շարունակում է իր հակասահմանադրական գործողությունները, եւ բացի այն, որ դատարաններն իրենց իրավունք են վերապահում արդեն թեմերի առաջնորդներ նշանակել, եպիսկոպոսներից շատերի ելքը՝ ՀՀ-ից դուրս գալու, արգելվել է, ամեն ինչ անում են, որ առաջիկայում Ավստրիայում կայանալիք Եպիսկոպոսաց ժողովը տեղի չունենա: Ի՞նչ գործողություններ են սրանք՝ ըստ Ձեզ:**

- Պետք է արձանագրել, որ Եկեղեցու դեմ այս պայքարն անիմաստ է, ավելին՝ միայն օգուտ է բերում Եկեղեցուն: Ինչու. որովհետեւ Եկեղեցու ներսում, այո, մաքրման պրոցես է սկսվել, եւ այն հոգեւորականները, ովքեր իսկապես խայտառակում էին Հայ առաքելական եկեղեցին, իրենց կամքով տարանջատվեցին Եկեղեցուց, ինչը բարձրացրեց Եկեղեցու վարկանիշը՝ եւս մեկ անգամ: Հայոց եկեղեցու պատմության մեջ սա շատ օրինաչափ գործընթաց է: Եկեղեցին ավելի զորեղ է եղել, քան Հռոմեական կայսրությունը: Այս առումով, եթե Հայաստանի իշխանությունները փորձում են նմանվել Հռոմեական կայսրությանը, նրանք էլ փորձում էին վերացնել քրիստոնեությունը, ապա թող պատմություն կարդան եւ տեսնեն, թե ինչպես կործանվեց Հռոմեական կայսրությունը.... այլ ոչ թե քրիստոնյա եկեղեցին: Եկեղեցու դեմ արվող գործողությունները հիմարություններ են, այլ բառով չեմ կարող պրոցեսը բնութագրել: Ի՞նչ է նշանակում՝ դատավորը եպիսկոպոսներ է նշանակում. դա միմիայն ծիծաղ է առաջացնում: Եթե քաղաքական հարցերում արդարանում են, ասում են՝ պատերազմ ենք կանխում՝ այս անընդունելի կեցվածքով, ապա Եկեղեցու դեմ գործողությունների համար որեւէ արդարացում չունեն: Իշխանությունն իր եվրոպացի շեֆերին եւս անհարմար իրավիճակի մեջ է դնում, քանի որ ոչ ոք չի կարող այս ամենն արդարացնել:

**Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

## Տաքսիները նեղում են հասարակական տրանսպորտին

Երեւան-Իջեւան, Իջեւան-Երեւան միկրոավտոբուսային երթուղու վարորդները դժգոհում են, որ վերջին շրջանում իրենք Երեւանից Իջեւան եւ հակառակ ուղղությամբ մեկնում են քիչ քանակի ուղեւորներով, քանի որ երթեւեկող մեքենաների քանակը պահանջարկից ավելի է, եւ երթուղին հագեցած է այն սպասարկող տաքսի ավտոմեքենաներով: Դրանցից մեկը, որը 7 տեղանոց միկրոավտոբուս է սպասարկում, համացանցում տեղադրել է օրվա տարբեր ժամերին իր ուղերթների ժամերը: Երեւան-Իջեւան եւ հակառակ ուղղությամբ գործող միկրոավտոբուսների վարորդները կասկածում են, որ գծում աշխատող տաքսիստները հարկային դաշտում չեն գործում, այսինքն՝ առկա է անհավասար մրցակցություն: Նրանք ասում են, որ ուղեւորների թվի նվազման պատճառով հասարակական տրանսպորտի այդ երթուղին կարող է փակվել, ինչից կտուժեն ուղեւորները, հատկապես՝ անապահովները, որոնք տաքսիներով երթեւեկելու հնարավորություն չունեն: Ի դեպ, միկրոավտոբուսի ուղեվարձը Իջեւանից Երեւան 1500 դրամ է, 7 տեղանոց միկրոավտոբուս-տաքսու ուղեվարձը՝ 2 հազար դրամ, իսկ տաքսիներով, երբ 4 ուղեւոր է հավաքվում, ուղեվարձը 2 հազար 500 դրամ է:

# ԱՄԻՍՆԵՐ ԱՆՑ ՎԹԱՐԻ ՄԵՂԱՎՈՐԸ ՄԻ ՔԱՆԻ ԷՋԱՆՈՑ ՆԱՄԱԿ Է ՍՏԱՆՈՒՄ ԻՐ ԱՊՊԱ-ԻՑ

Հայաստանում ԱՊՊԱ-ի վճարները տարեցտարի թանկանում են: Անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, այս տարի վճարները 15%-ով աճել են: Վարորդները մեզ հետ զրույցում ասում են, որ ապահովագրավճարի համար պետք է ներքին եւ վերին շեմ սահմանվի, որ կամայականություններ չլինեն, եւ ամեն ընկերություն որքան ուզենա՝ գինը բարձրացնի: «Անցած տարվա փետրվարին մեքենայիս ապահովագրության համար վճարել եմ 37 հազար դրամ, մի քանի օրից պետք է վճարեմ, նայեցի, տեսնեմ՝ 44 հազար դրամ է կազմում: Այսինքն՝ մոտ 20%-ով գինը թանկացել է, չգիտես ինչու: Էսպես թանկացնելով ո՞ւր կհասնեն: Ես դեռ վթար չունեմ, բա վթար ունեցող վարորդները կրկնակի, եռակի կմուծեն: Ասում են, թե իբր վնասով են աշխատում ԱՊՊԱ ընկերությունները: Դա այդպես չի, քանի որ դեպքեր գիտեմ, երբ ընկերությունը մեքենայի փոխհատուցում տալիս է, հետո՝ մի քանի ամիս հետո էն մարդը, որը վթարի մեղավորն է եղել, մի քանի էջանոց նամակ է ստանում իր ապահովագրական ընկերությունից, որի մեջ նշված է լինում. քանի որ դուք 40 րոպեի ընթացքում չեք տեղեկացրել վթարի մասին, ուստի պետք է վճարեք ընկերության կողմից վճարված գումարը: Ի՞նչ է ստացվում, վթար է տեղի ունենում, որոշ վարորդներ կամ չգիտեն, կամ վթարով են ընկնում, ու այդ 40 րոպեն արագ անցնում է, եւ ուշացած են տեղյակ պահում իրենց ապահովագրական ընկերությանը: Արդյունքում՝ մյուս տարի իրենց ապահովագրական վճարը՝ կապված փոխհատուցած վճարի չափից, թանկանում է, հետո էլ, որքան գումար ընկերությունը փոխհատուցում է, այդքան գումար ետ են գանձում վարորդից, անգամ՝ դատարանով: Հիմա հարց. ո՞վ է վնասով աշխատում: Չկա մի ԱՊՊԱ ընկերություն, որ վնասով աշխատի»,- վրդովված պատմում է 48-ամյա **Արմեն Սահակյանը**:

2023 թ. ապրիլի 1-ից ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության շուկան ամբողջությամբ ազատականացվեց, ըստ այդմ՝ ամեն մի ապահովագրական ընկերություն հնարավորություն էր ստանալու իր սակագինն առաջարկել, բայց որ տարվա ընթացքում երկու անգամ թանկացում կլիներ, նույնիսկ ամենավատատես վարորդները չէին սպասում:

Զանգահարեցինք «Նաիրի ինշուրանս» ընկերություն՝ պարզելու, թե արդյոք փետրվարին թանկացնե՞լ են ավտոմեքենաների ԱՊՊԱ-ի վճարները: «Մեր ընկերությունը պարբերաբար գնային փոփոխություն է իրականացնում, բայց, առհասարակ, հաշվարկ է իրականացնում ԱՊՊԱ համակարգում, եթե վարորդի կողմից բոնուս-մալուս է իրականացվում, իր մեղավորությամբ պատահար է տեղի ունենում, ապա թանկ է վճարում: Վերջին փոփոխությունն ընկերությունում եղել է նոյեմբերին, արժեք չկա, որ տեղեկացնեմ, որ այդքանով թանկացել է»,- ասացին ընկերությունից:

«Արմենիա ինշուրանս» ընկերությունից էլ հայտնեցին. «Գնային փոփոխություններ եղել են, եւ դա պայմանավորված է շուկայում գների ազատականացմամբ: Անցած տարվա ապրիլից սկսած, գներն ազատականացվել են, յուրաքանչյուր ընկերություն ինքնուրույն է որոշում իր գնագոյացման սխեման՝ ելնելով իր վնասաբերության պատմությունից: Տեղեր կան, որ մեր ընկերությունն իջեցրել է գինը, տեղեր կան, որ բարձրացրել է: Հիմա ձեզ ահազանգում են միայն այն հաճախորդները, որ ԱՊՊԱ-ի գինը բարձրացել է, բնականաբար, այն մասով, որ էժանացել է, չեն ահազանգի»: Կասեք՝ ի՞նչն է էժանացել, որքա՞ն է էժանացել: «Այս ամենը կատարվում է հաշվարկների հիման վրա, գործակիցներ են կիրառվում՝ տարբեր չափանիշներից ելնելով՝ մեքենայի մակնիշից, մեքենայի տարեթվից, մեքենայի օգտագործման վայրից: Օրինակ՝ Երեւան քաղաքում գուցե ավելի բարձր է մեր գործակիցը, քան մարզերում, ելնելով նրանից, որ մարզում վթարներն ավելի քիչ են: Մեր հաշվարկները գալիս են վթարների պատմությունից»: Հունվարի 1-ից ուժի մեջ մտավ նաեւ առողջապահական պարտադիր ապահովագրությունը, գուցե դա է պատճառը, որ փետրվարից թանկացավ ավտոմեքենաների ԱՊՊԱ-ն՝ հետաքրքրվեցինք մենք: «Դա կապ չունի»,- փոխանցեցին ընկերությունից:

**Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ԴԱՇԻՆ

# ՓԱՇԻՆՅԱՆԸ ՈՉ ԹԵ ԵՎՐՈՊԱՄԵՏ Է, ԱՅԼ՝ ԵՎՐՈՅԱՄԵՏ

Տիկոլ Փաշինյանը հայ հասարակությանը եւ նույնիսկ եվրոպացիներին փորձում է համոզել, որ ինքը Հայաստանը տանում է դեպի Եվրամիություն, քանի որ իրեն ու իր ռեժիմին հոգեհարազատ են եվրոպական արժեքները: Իսկ որքանո՞վ է Փաշինյանը՝ անձամբ, եւ իր ռեժիմը՝ ընդհանրապես, եվրոպական, որքանո՞վ են իրենք համարժեք այն արժեքներին, արժեքային համակարգին, որոնք այսօր ավելի ու ավելի գերիշխող են դառնում Եվրոպայում, եվրոպական հասարակություններում: Իրականում, Փաշինյանը Հայաստանը տանում է եվրոպական ուղղությանը հակառակ. Փաշինյանի համար Եվրոպա գնալը եվրոպացիներից փող եւ քաղաքական աջակցություն ստանալն է, որ պահի իր իշխանությունը՝ «թշնամի եւ ատելի Ռուսաստանի» կողմից իբրեւ թե իրականացվող հիբրիդային հարձակումներից:

Եվրոպայում հիմա ավելի ու ավելի մեծ ազդեցություն են ստանում աջ պահպանողական քաղաքական ուժերը, հասարակությունները, ընտրողներն իրենց ձայնը տալիս են ազգային արժեքներ դավանող եւ ուժեղ պետության կողմնակից քաղաքական ուժերին եւ գործիչներին, լիբերալներն ու տարբեր տեսակի կանաչներն ու կապույտները դուրս են մղվում քաղաքական լուսանցք: Բրիտանական The Telegraph հանդեսը մի հոդված է հրապարակել՝ «Մելոնին Մակրոնին կտրում է Եվրոպայի շարժիչից, Իտալիայի վարչապետը միանում է Գերմանիայի կանցլերին՝ մայրցամաքն ավելի պահպանողական ուղղությամբ տանելու համար» վերնագրով:

Հոդվածի ամբողջ իմաստն այն է, որ Եվրոպայում Ֆրանսիա-Գերմանիա դաշինքին փոխարինելու է գալիս Գերմանիա-Իտալիա դաշինքը, Գերմանիայի կանցլեր Ֆրիդրիխ Շոլցը Ֆրանսիայի նախագահ Մակրոնի փոխարեն նախապատվություն է տալիս Իտալիայի վարչապետ Ջորջիա Մելոնիին՝ Եվրոպան պահպանողական արժեքներով վերակառուցելու համար, ինչը նշանակում է, որ Եվրոպայում, այնպես, ինչպես ԱՄՆ-ում, լիբերալ-գլոբալիստների գերիշխանությունն ավարտվում է: «Իտալիան եւ Գերմանիան ավելի մոտ են, քան երբեւէ»,- Գերմանիայի կանցլերի խոսքերն է մեջբերում բրիտանական պարբերականը, խոսքեր, որոնք Գերմանիայի կանցլերն արտասանել է Իտալիա կատարած այցի ընթացքում:

Իհարկե, այս համեմատությունը մի քիչ վախեցնում է, եւ բրիտանական հանդեսը չի հիշում կամ գուցե չի ցանկանում հիշել, որ Գերմանիան եւ Իտալիան իրականում ավելի մոտ եղել են սրանից գրեթե հարյուր տարի առաջ, երբ Իտալիայի ղեկին Իտալիայի Նացիոնալ ֆաշիստական կուսակցության ղեկավար Բենիտո Մուսոլինին էր, իսկ Գերմանիայի կանցլերը՝ Նացիոնալ սոցիալիստական՝ նացիստական կուսակցության ղեկավար Ադոլֆ Հիտլերը:

Բայց Ջորջիա Մելոնին ֆաշիստ չէ, իսկ Ֆրիդրիխ Մերցն էլ՝ նացիստ, Մելոնին «Իտալիայի եղբայրներ» աջ կենտրոնամետ կուսակցության առաջնորդն է, որը բացարձակ հաղթանակ տարավ 2022 թվականի խորհրդարանական ընտրությունների արդյունքում՝ ղեկավարելով Իտալիայի կառավարությունը, իսկ Ֆրիդրիխ Մերցի ղեկավարած Քրիստոնեադեմոկրատական միությունը, որը եւս աջ կենտրոնամետ կուսակցություն է, 2025 թ. տեղի ունեցած Բունդեսթագի ընտրություններում ստացավ հարաբերական մեծամասնություն եւ Գերմանիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության հետ ձեւավորեց կոալիցիա, որի արդյունքում գլխավորեց կառավարությունը:

Գերմանիան նախընտրում է դաշինք կազմել Իտալիայի հետ, քանի որ երկու երկրներում էլ իշխանության են աջ կամ կենտրոնամետ պահպանողականները, իսկ Ֆրանսիայի նախագահը լիբերալ-գլոբալիստական ուղղության հետեւորդ է՝ մերժված եւ մեռնող ուղղության: Եվրոպայում հասկացել են, որ այդ ուղղությունը տանում է ազգային պետությունների քայքայմանը, ազգային, ընտանեկան եւ հոգեւոր արժեքների ոչնչացմանը:

Չնայած Փաշինյանը իշխանությունը զավթելուց հետո վստահեցնում էր, որ ինքը ոչ մի իզմ-եր չի դավանում, այսինքն՝ չունի քաղաքական սկզբունքներ եւ գաղափարախոսություն, բայց նրա կառավարությունը եւ ինքն անձամբ լիբերալ- գլոբալիստների դրածոն է, նրանց քաղաքական գծի առաջ մղողը: Միայն այն, որ նա հայտարարեց, որ տրանսգենդեր Մել Դալուզյանին վերցնում է իր անձնական պաշտպանության տակ, ամեն ինչ արժեր: Միայն այն, որ նա դասական իմաստով չունի ընտանիք եւ նույնիսկ վարչապետի պաշտոնը զբաղեցնելուց հետո չօրինականացրեց իր հարաբերությունները քաղաքացիական կնոջ հետ, խոսում է ընտանեկան արժեքների նկատմամբ քամահրական վերաբերմունքի մասին: Իսկ Հայ առաքելական սուրբ եկեղեցու դեմ կազմակերպված արշավն ընդհանրապես ուղղված է հայ հասարակության պատմականորեն ձեւավորված արժեհամակարգի դեմ:

Եվրոպական պահպանողականությունն առաջին հերթին հարգանքն է կրոնական արժեքների, հոգեւորականության, հասարակական բարոյականության, ազգային մշակույթի նկատմամբ, բաներ, որոնց դեմ Փաշինյանը եւ նրա ռեժիմի ներկայացուցիչները պայքարում են ամեն Աստծո օր եւ ժամ: Եվրոպական պահպանողականության ամենակարեւոր սկզբունքը հարգանքն է՝ «Իրերի հաստատված կարգի» նկատմամբ, որը ենթադրում է, որ հասարակությունը, ներառյալ նրա բոլոր ինստիտուցիոնալ տարրերը պատմական զարգացման արդյունք են, եւ պետության պարտքն է՝ այդ կարգը պահպանել եւ պաշտպանել արհեստական փոխակերպումներից:

Եվրոպական պահպանողականության մեկ այլ սկզբունք հռչակում է, որ պետությունը պետք է վճռորոշ դեր խաղա ժողովրդի տնտեսական, մշակութային, հոգեբանական եւ կրոնական համերաշխության գործում, չեզոքացնի անջատողականության ցանկացած դրսեւորում եւ ապահովի ազգի միասնությունը:

Հիմա ասեք՝ ոչ թե ավանդական ընտանիքը, այլ տրանսգենդերին իր պաշտպանության տակ վերցրած, Հայոց պատմության, մշակույթի, Եկեղեցու եւ հոգեւորականների դեմ արշավանք սկսած Փաշինյանը եւ նրա ռեժիմի ներկայացուցիչները որքանո՞վ են եվրոպական, որքանո՞վ են համապատասխանում Եվրոպայում եւ դրա առանձին երկրներում առկա քաղաքական եւ գաղափարախոսական դրսեւորումներին:

Այդ մարդիկ եվրոպամետ են այնքանով, որ եվրոն գերադասում են ռուսական ռուբլուց, իրենց փողերը գերադասում են պահել եվրոպական եւ ոչ ռուսական բանկերում: Մյուս բոլոր առումներով նրանք ոչ միայն հակաեվրոպական են, այլեւ՝ հակամարդկային:

**Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ**

# ԴԻՎՈՏԱԾ ԵՐԿԻՐ

Եթե ձեր հավաքնում թռչունների անկում է գրանցվել, կարող եք դիմել աղվեսին: Նա ձեզ կներկայացնի անկման պատճառները եւ դրա դեմն առնելու ուղիները: Որոշակի վարձատրության դեպքում, իհարկե: Սա ամենեւին էլ կատակ չէ, ոչ էլ նույնիսկ հիմարություն: Այսօր էլ Հայաստանում կան մարդիկ, որոնք իրենց անհանգստացնող հարցերով դիմում են պետական մարմիններին, հսկայական ժամանակ ու նյարդեր վատնում, բայց այդպես էլ չեն հասկանում, որ հենց այդ կառույցներն են մեղավոր, որ իրենց հարցերը չեն լուծվում: Անձամբ ես մի առիթով դիմել էի ՊԵԿ՝ չիմանալով, որ այդ կառույցը հենց նրա համար է, որ իմ գրպանից հնարավորինս շատ փող տանի: Եվ գիտե՞ք ինչ տեղի ունեցավ: Ոչ միայն ինձնից ապօրինի կերպով գողացած փողը չտվին, այլ մի բան էլ մուննաթ եկան, որ գրպանումս իրենց սպասածից շատ ավելի պակաս գումար կար: Հրեայի պատմությունն է, ասում է՝ դրամապանակ եմ գտել, իսկ մեջի գումարը չի հերիքում…

Տիկին Անահիտ Բախշյան, հոկտեմբերի 27-ի գործով դիմել եք ՀՀ գլխավոր դատախազություն, որ ի՞նչ անեք, ի՞նչ եք ուզում, որ բացահայտի հոկտեմբերի 27-ի ակունքներում կանգնած այս իշխանությունը: Մի՞թե Դուք չեք նկատել, որ հոկտեմբերի 27-ի ահաբեկչության իսկական «շահառուներն» այսօր վխտում են գործող իշխանության մեջ կամ նրա շուրջ, մի՞թե դժվար է հասկանալ, որ այդ իշխանության «գլուխը» երբեք չի բացահայտելու նրանց ինքնությունը եւ, հետեւաբար, երբեք գլխավոր դատախազին ցուցում չի տալու՝ բացահայտել այդ վաղուց բացահայտված գործը: Հետեւաբար՝ դիմել եք գլխավոր դատախազին, հանդիպում եք պահանջում, որ ի՞նչ անեք: Ու դեռ մի բան էլ գլխավոր դատախազին ու իրավապահ մյուս մարմինների ղեկավարներին եք վիրավորում, որ նրանք, իբր, իրենց տեղում չեն: Նրանք ճիշտ իրենց տեղում են, տիկին Անահիտ Բախշյան, այդ մենք՝ ես եւ Դուք, մեր տեղում չենք, քանզի չենք հասկացել, որ հավաքնից կատարվող գողությունների հարցով աղվեսին չի կարելի դիմել:

Իր մայրամուտն ապրող ԱԺ-ի ընդդիմադիր պատգամավորները վերջերս կրկին աղմուկ բարձրացրին 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի զեկույցի շուրջ: Էլ Անդրանիկ Քոչարյանին ու Ալեն Սիմոնյանին վատ խոսքեր ասել, էլ բան՝ կոծկում եք, թաքցնում եք, խայտառակ պարտության մեղավորներին չեք բացահայտում… Այս իրարանցումը, եթե ուզում եք իմանալ, ինձ համար նույնիսկ հետաքրքիր էլ չէր: Արդեն գիտեի՝ Անդոն պաս է տալու Ալենին, Ալենն էլ ընդդիմադիրներին մատնացույց է անելու իր հիմնարկի 3-րդ բաժնի պահակին, թե գնացեք, զեկույցն այնտեղ դրված է, ծանոթացեք: Ասենք՝ ծանոթացան (իսկ ծանոթացողներ եղել էին), հետո՞: Ժողովուրդն իմացա՞վ, թե ինչ է տեղի ունեցել, ինչու է տեղի ունեցել, ում պատճառով ու մեղքով է տեղի ունեցել: Ի վերջո, այս հարցերի պատասխաններից են կախված շատ այլ եւ ավելի բարդ հարցերի պատասխաններ: Հիմա մենք ի՞նչ ենք ուզում Անդոյից, եթե հայտնի է, որ Ալենն Անդոյի վերադասն է, իսկ Ալենի վերադասն էլ այս «հավաքնի» պահակն է:

Մի քանի օր առաջ Մասյացոտնի թեմում արտասովոր դեպք էր գրանցվել: Դարավոր թեմում կառավարության կողմից թեմակալ առաջնորդ էր նշանակվել: Ու չնայած ամեն ինչ օրենքով էր արվել՝ դատարանի որոշումով-բանով, թեմը, բառի բուն իմաստով, դիվոտել էր: Ափսոս՝ Շամշյանն այդ օրերին Մասյացոտնի թեմում չէր, որ գրեր, թե իրավապահ մարմիններից ինչ երեւելի պաշտոնյաներ էին ժամանել Արարատ՝ դիվահարված ժողովրդին հանգստացնելու համար: Հիմա էս խեղճերն ի՞նչ անեն, ո՞ւմ դիմեն, որ սրբագրվի քրիստոնեության պատմության մեջ հիրավի եզակի այս խայտառակությունը: Գան կառավարության շենքի մոտ՝ ցո՞ւյց անեն, փողո՞ց փակեն, գնան նախագահակա՞ն՝ քնած մանուշակին հյուր… Այնպիսի բան է տեղի ունեցել, որ Մասյացոտնի թեմում մարդիկ այլեւս չգիտեն՝ իրենք իրական Հայաստանի հպարտ քաղաքացի՞ են, թե՞ Հիսուսի հավատից դուրս ընկած խալխ: Երեւի պիտի Աստծուն բողոքեն, հանդիպում պահանջեն… Այլապես այս ամենի «առաջնորդը» խիստ զբաղված է՝ թմբուկ է խփում (Լոռիում կասեին՝ դհոլ ա տալի): Հրաշալի պատկեր է՝ ինչքան դատարկ դհոլ կա, հավաքել է շուրջը, ու դըմփ հա դըմփ: Պատկերացրեք մի պահ, որ այդ դատարկ դհոլների հավաքածուն իր կառավարությունն է, ու ամեն դհոլ հռռում ու բռռում է «առաջնորդի» փայտիկի հարվածի ուժի համեմատ:

Է՛, եղբայր, ամբողջ երկիրն է դիվոտած, մենք Մասյացոտնից ենք խոսում, ՊԵԿ-ից, գլխավոր դատախազից, Անդոյից ու Ալենից…

**Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**
**edik.andreasyan@hraparak.am**

# ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ Ի ՎԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՄՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՈՐԵՎԷ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՉԵՄ ՏԵՍԵԼ

*«Հրապարակի» զրուցակիցն ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի ժառանգ **Դոնալդ Վիլսոն Բուշն** է, որն ԱՄՆ-ում հիմնել է ասոցիացիա՝ Armenian National Association-ը:*

**- Փետրվարին Հայաստան եւ Ադրբեջան է ժամանում փոխնախագահ Ջեյ Դի Վենսը՝ TRIPP նախագծի, հայ-ադրբեջանական խաղաղության հարցով վաշինգտոնյան համաձայնագրերի ընթացքը խթանելու: Սա 2012-ից ի վեր՝ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի այցից հետո, ԱՄՆ ամենաբարձրաստիճան պաշտոնյայի այցն է ՀՀ: Նշանակում է՝ ԱՄՆ-ն ամրապնդում է իր դիրքերը ոչ միայն Հայաստանում, այլեւ՝ Հարավային Կովկասում: Սա նշանակո՞ւմ է հայ-ամերիկյան հարաբերությունների նոր՝ բարձր նշաձող:**

- Այո, ԱՄՆ փոխնախագահի առաջիկա այցը Երեւան հստակ վկայությունն է այն բանի, որ հայ-ամերիկյան հարաբերությունները սահմանում են նոր, բարձր նշաձող: Հետաքրքիր է, որ Ջեյ Դի Վենսի այցը Հայաստան տեղի է ունենալու փետրվարին. 80 տարի առաջ՝ փետրվարին, Ռուսաստանում ԱՄՆ դեսպան Ջորջ Քենանը Մոսկվայից ուղարկեց իր երկար հեռագիրը (1946թ. փետրվարի 22), որում ԱՄՆ պետքարտուղարին նախազգուշացրեց, որ Խորհրդային Ռուսաստանի պահվածքն էքսպանսիոնիստական է, հետեւաբար, լուրջ սպառնալիք է արեւմտյան ժողովրդավարության համար, որ ԱՄՆ-ն պետք է ընդունի երկարաժամկետ, համբերատար, բայց ամուր զսպման ռազմավարություն, որը չի սպառնա Ռուսաստանի առաջնորդությանն արեւելյան կիսագնդում: Ուղիղ ռազմական բախման փոխարեն, ԱՄՆ-ն պարտադրեց 5 տասնամյակ տեւած տնտեսական մեկուսացում եւ սառը պատերազմ, որը, ի վերջո, կործանեց խորհրդային տնտեսությունը: 1991-ին ԽՍՀՄ փլուզումից հետո ԱՄՆ-ն շարունակել է զսպել իրեն եւ ավելի քան 30 տարի երբեք ուղղակիորեն չի սպառնացել Մոսկվային՝ ռազմական բախմամբ: Դրա փոխարեն, ԱՄՆ-ն օգտագործել է մեղմ դիվանագիտություն եւ տնտեսական խթաններ՝ նախկին խորհրդային պետություններին ռուսական ազդեցությունից հանելու համար (չնայած Հայաստանը դրանցից մեկը չէ՝ նախկին ԱՊՀ երկրներից շատերը, ըստ էության, միացել են ՆԱՏՕ-ին): Ակնհայտ է, որ 2005-ից ի վեր 3 մայրցամաքները միացնող ռազմավարական աշխարհագրական դիրքի պատճառով, Հայաստանը եղել է ԱՄՆ արտաքին քաղաքականության եւ այս տարածաշրջանի աշխարհաքաղաքական ռազմավարության առաջնային ուշադրության կենտրոնում: Եվ հիմա, երբ Ռուսաստանի գերիշխող ազդեցությունն Անդրկովկասում գրեթե ավարտվել է ռուս-ուկրաինական պատերազմում վերջերս տեղի ունեցած ռազմատնտեսական փլուզման պատճառով, ԱՄՆ փոխնախագահն այս ամիս կժամանի Երեւան՝ ճանաչելու ԱՄՆ-ի հետ Հայաստանի գործընկերության կարեւորությունը եւ հաստատելու Հայաստանի ռազմավարական դերը նոր աշխարհակարգում, որը ձեւավորվում է ամերիկյան ազդեցությամբ:

**- Կոնկրետ ի՞նչ արդյունքներ սպասել Վենսի այցից, Ձեզ հայտնի՞ են հայաստանյան այցի օրակարգի մանրամասները:**

- Քանի որ նախատեսվում է փոխնախագահի (եւ ոչ թե նախագահի) այց Հայաստան, Ջեյ Դի Վենսի առաջիկա այցը հիմնականում արարողակարգային բնույթ կունենա, մենք չպետք է ակնկալենք որեւէ լայնածավալ երկկողմ հայտարարություն կամ նշանակալի դիվանագիտական առաջընթաց: Այցը պետք է դիտարկել որպես այն հստակ եւ շոշափելի արդյունքներից մեկը, որը հաստատում է ԱՄՆ-ի հավատարմությունը 2024 թ. հունվարի 14-ին Հայաստանի հետ ստորագրված գործընկերության համաձայնագրին: Անշուշտ, ԱՄՆ կողմից Հայաստանին օգտակար աշխարհաքաղաքական եւ տնտեսական արդյունքների վրա ազդելու հանձնառության արդյունքները սկսել էին երեւալ դեռեւս Վենսի առաջիկա այցից շատ առաջ: Ձեր փնտրած շոշափելի արդյունքներից մի քանիսն են՝ ԱՄՆ զորքերի հետ համատեղ զորավարժություններ (Eagle Partnership), որոնք արդեն 3 տարի անընդմեջ տեղի են ունենում ՀՀ ՊՆ-ի հետ, Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ սահմանների բացում՝ առեւտրային տրանսպորտի համար, ինչը հանգեցրել է ցորենի եւ բնական գազի գների անկման, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ TRIPP մայրուղու խաղաղության համաձայնագրի ստորագրում՝ 2025 թ. օգոստոսի 8-ին, տնտեսական աճի պայթյունային աճ եւ Հայաստանի ՀՆԱ-ի աննախադեպ՝ 121 % աճ՝ 2020 թվականից՝ 44-օրյա պատերազմի ավարտից ի վեր (2025-ին ՀՆԱ-ի 27.86 % աճ՝ 2020 թ. ՀՆԱ-ի 12.6%-ի համեմատ): Այս կարճ ցանկը ներկայացնում է ԱՄՆ-ի ներգրավվածության վերջին մի քանի արդյունքները 1991-ին Հայաստանի անկախության հռչակումից ի վեր: Իմ կարծիքով, Ջեյ Դի Վենսի առաջիկա այցը տեղի կունենա պարզապես Հայաստանի՝ Արեւմուտք անցման հարցում ԱՄՆ-ի երկարաժամկետ հանձնառության այս հսկայական եւ դրական արդյունքներն ընդգծելու համար՝ այդպիսով վերջնականապես ազատագրելով այն օսմանյան եւ ռուսական բազմադարյա տիրապետությունից:

**- Օրերս կայացավ ՀՀ եւ ԱՄՆ ԱԳ նախարարների հանդիպումը, եւ համատեղ հայտարարություն տարածվեց TRIPP-ի վերաբերյալ, որով ամերիկյան ընկերությունը պատասխանատու կլինի TRIPP զարգացման համար 49 տարի նախնական ժամկետով, Հայաստանն ԱՄՆ-ին առաջարկում է TRIPP ընկերության 74 տոկոս բաժնեմասը՝ իրեն պահելով 26-ը: Հետագայում համագործակցությունը կերկարաձգվի եւս 50 տարով, եւ ՀՀ կառավարության մասնաբաժինը կդառնա 49 տոկոս: Ի՞նչ հնարավորություններ է բացում TRIPP-ը Հայաստանի համար:**

- Իմ կարծիքով, այս համաձայնագիրը խոստումնալից ապագա է նշանակում տնտեսական առաջընթացի եւ առեւտրային զարգացման համար ոչ միայն Հայաստանում, այլեւ ամբողջ տարածաշրջանի համար: Ես լավատես եմ, քանի որ գիտեմ, որ TRIPP մայրուղին ընդամենը փոքր, թեեւ առաջին մասն է շատ ավելի մեծ տարածաշրջանային ծրագրի, որը միացնում է ամբողջ Անդրկովկասը ճանապարհների, երկաթուղիների եւ օպտիկամանրաթելային մալուխների ցանցով՝ Հայաստանը դարձնելով դրա կենսական կենտրոնը: Ամերիկյան տեսանկյունից լավագույն օրինակը, որ կարող եմ բերել, թե ինչ դրական փոփոխություններ պետք է ակնկալել Հայաստանի համար TRIPP-ի տնտեսական ազդեցության առումով, Էյզենհաուերի միջպետական ավտոմայրուղիների համակարգի կառուցումն է 1956-1969թթ.: ԱՄՆ-ում այդ մայրուղու կառուցման նախագիծը ոչ միայն ապահովեց հազարավոր աշխատատեղեր եւ շահավետ շինարարական պայմանագրեր, այլեւ նպաստեց արվարձանների զարգացմանն ամբողջ Ամերիկայում: Սա, իր հերթին, խթան հանդիսացավ ամերիկյան ավտոարդյունաբերության համար, հանգեցրեց սպասարկման վրա հիմնված ձեռնարկությունների աճին՝ մոթելներ, արագ սննդի կետեր, առեւտրի կենտրոններ, հանգստի վայրեր, բենզալցակայաններ: Էյզենհաուերի մայրուղու կառուցման հսկայական առեւտրային ազդեցությունն ԱՄՆ տնտեսության վրա անհնար է հաշվարկել: Ես կանխատեսում եմ նույն պայծառ ապագան Հայաստանի համար, որը շուտով կսկսվի TRIPP մայրուղու կառուցմամբ, որը կապում է Հայաստանն Ադրբեջանի եւ Թուրքիայի, իսկ լայն հաշվով՝ Եվրոպան Ասիայի հետ:

**- Ադրբեջանում արդեն սկսել են հաշվել այս նախագծից ակնկալվող տնտեսական օգուտները: Երեւանից ու Բաքվից զատ, TRIPP-ը ողջունել են Վրաստանը, որոշ վերապահումով՝ Ռուսաստանը, իսկ Իրանը լուրջ մտավախություններ ունի, եթե չասենք՝ դեմ է: Օրերս ՀՀ-ում Իրանի դեսպանը նշեց, որ այս երթուղին կարող է օգտագործվել այլ նպատակներով, եւ Հայաստանը վերածվում է Թեհրանի դեմ թշնամաբար տրամադրված ուժերի կենտրոնի: Սա չի՞ խաթարելու TRIPP-ի իրագործման ընթացքը:**

- Լավ հարց է՝ հաշվի է առնում Մերձավոր Արեւելքում ԱՄՆ մասնակցության անկայուն աշխարհաքաղաքական իրողությունները եւ Իրանի ապագայի վրա ազդելու ԱՄՆ մտադրությունը: Իրավացի եք՝ ենթադրելով, որ Իրանի մասնակցությունը, որպես Հայաստանի տարածաշրջանային գործընկեր, թելից է կախված: Ներկայում, երբ մենք խոսում ենք, Միացյալ Նահանգներն ինտենսիվ եւ ուժեղ ռազմական դիրք է գրավում Օմանի ծոցում, որը, այս կամ այն կերպ, որոշելու է Իրանի ապագա կուրսը: Բայց, անկախ այն արդյունքից, որին կհանգեցնի ԱՄՆ միջամտությունը, ես չեմ կարծում, որ դա որեւէ կերպ բացասական ազդեցություն կունենա TRIPP մայրուղու կառուցման վրա: Մի կողմից, եթե Իրանի ներկայիս կառավարությունը փոխվի, TRIPP մայրուղու նախագիծը կշարունակի առաջ շարժվել ըստ նախատեսվածի, իսկ եթե հաջողվի գոյատեւել, TRIPP նախագիծը կշարունակի առաջ շարժվել ըստ նախատեսվածի: Իրականում, ոչ մի տարբերություն չկա: Կարեւոր է հիշել Ամերիկայի երկարաժամկետ ռազմավարական շահը՝ ամրապնդելու Հայաստանի ներկայիս դիրքը՝ որպես առեւտրի, մշակույթի եւ հաղորդակցության աշխարհագրական խաչմերուկ, որը կապում է նրա հարեւաններին տարածաշրջանում: Մոտ ապագայում, երբ անդրկովկասյան տարածաշրջանային ավտոմոբիլային եւ երկաթուղային գծերի ցանցն ավարտուն տեսք ստանա, իսկ Հայաստանը դառնա նրա դինամիկ կենտրոնը, դրանից կշահեն նրան միացած բոլոր երկրները՝ Վրաստանը, Թուրքիան, Ադրբեջանը եւ, այո, նույնիսկ Ռուսաստանը:

**- Ադրբեջանի իշխանությունները հայտարարում են, որ գոհ են Թրամփի վարչակազմից, ի տարբերություն նրա նախորդի՝ Բայդենի: Հայաստանում, հակառակը, կարծիք կա, որ նախագահ Բայդենի վարչակազմն ավելի հայամետ էր ու արդյունավետ՝ Հայաստանին եւ Արցախին վերաբերող հարցերում: Դուք նախկին եւ գործող վարչակազմերի՝ Հայաստանի նկատմամբ քաղաքականության ի՞նչ փոփոխություններ եք տեսնում:**

- Ոչ, Հայաստանի նկատմամբ ԱՄՆ նախկին եւ ներկա վարչակազմերի քաղաքականության մեջ որեւէ փոփոխություն չկա: Դա բացատրվում է նրանով, որ ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ նախագահները չեն կարող որեւէ փոփոխություն մտցնել: Պարզ ասած՝ ԱՄՆ նախագահը չի պլանավորում, չի սահմանում, չի որոշում ԱՄՆ արտաքին քաղաքականությունը: Միացյալ Նահանգների նախագահը, ԱՄՆ Պետդեպարտամենտի եւ ԱՄՆ Պատերազմի դեպարտամենտի միջոցով, պարզապես իրականացնում է այն արտաքին քաղաքականությունը, որը մանրակրկիտ կերպով մշակվում է ԱՄՆ ռազմական ղեկավարության կողմից՝ համագործակցելով օտարերկրյա հետախուզական աղբյուրների եւ ամերիկյան գաղտնի ծառայությունների հետ, ինչպիսիք են ԿՀՎ-ն եւ ՀԴԲ-ն: Համատեղ աշխատելով՝ այս խմբերն օգտագործում են քվանտային համակարգիչներ եւ այլ բարդ միջոցներ՝ ստեղծելու մանրամասն մոդելներ, որոնք ի վերջո դառնում են արտաքին քաղաքականության ծրագրեր, որոնք այնուհետ իրականացնում է ԱՄՆ նախագահը: Ուղիղ ասեմ, որ 1999 թվականին Վազգեն Սարգսյանի սպանությունից ի վեր Հայաստանի նկատմամբ ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ որեւէ էական փոփոխություն չեմ տեսել: Հաշվի առնելով 2008 թ. համաշխարհային շուկայի փլուզման, 2014 թ. Ղրիմ Ռուսաստանի ներխուժման եւ 2020 թ. Covid համավարակի հետ կապված որոշ կարճաժամկետ ճշգրտումները՝ Հայաստանի համար ԱՄՆ մշակած ընդհանուր պլանը գրեթե 30 տարի մնացել է անփոփոխ:

**Արա ԱԼՈՅԱՆ**

## «Բեռլինյան տապ». սերիալ, որն արժե դիտել

Փետրվարի 9-ին ռուսական Առաջին ալիքով կկայանա «Բեռլինյան տապ» լրտեսական նոր սերիալի պրեմիերան: Սերիալում գործողությունները ծավալվում են 1943-ի ամռանը: ԽՍՀՄ ղեկավարությունը տեղեկություններ է ստանում, որ ֆաշիստական վարչակարգի ենթակայությամբ գործող ֆիզիկոսները սկսել են միջուկային ռումբի ստեղծման աշխատանքներ: Խորհրդային գործակալ Ֆրանց Խարթմանը, որի կերպարը մարմնավորել է Գելա Մեսխին, հանձնարարություն է ստանում՝ տեղեկություններ հավաքել այդ մասին: Գործակալ Խարթմանն աշխատում է Բեռլինում՝ քողարկմամբ: Նա սկսում է առաջադրանքի կատարումը: Մշակում է բազմաքայլ օպերացիա՝ ներառելով գերմանական հետախուզության ղեկավար Վալտեր Շելենբերգին, որի կերպարը մարմնավորել է Ալեքսեյ Ֆիլիմոնովը: Տեսադաշտում հայտնվում է գերմանացի ֆիզիկոս Վերներ Գեյզենբերգը (Կյարո): Առաջադրանքն իրականացնելիս Խարթմանը ծանոթանում է գերմանական ԱԳ նախարարության աշխատակից Դորիի հետ, ինչը ճակատագրական է լինում եւ փոխում է գործակալի կյանքի ընթացքը: Այդ ընթացքում Մոսկվայում Իգոր Կուրչատովի ղեկավարությամբ արագանում են խորհրդային միջուկային ռումբի մշակման աշխատանքները: Մոսկվայի համար կարեւոր էր ոչ միայն թշնամուն հաղթելը, այլ նաեւ թույլ չտալը, որ որեւէ մեկը կարողանա խորհրդային պետությանը միջուկային շանտաժի ենթարկել: Այս խնդիրն իրականացնելու համար խորհրդային գիտնականները պետք է հիմնարար հետազոտություններ կատարեին ու պրակտիկ արդյունքներ ստանային ամենակարճ ժամկետներում: Սերիալը նկարահանվել է Դմիտրի Պոլյակով-Կատինի համանուն վեպի հիմքով եւ հանդիսանում է պատմական իրական դեպքերի վերաիմաստավորումն ու կինոմեկնաբանական իրական դեպքերի վերաիմաստավորումն ու կինոմեկնաբանությունը:

**Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## Մի կտոր հայ վաստակելու հնարավորություն են տվել՝ քաղաքների նկարագիրը խեղել

Գերիշխում է կամայականության, ապօրինության, «անգույն», աններդաշնակ, խառնիճաղանճ կառուցումների տենդը:

Բոլոր բնակավայրերում սնկի պես վեր հառնող նոր կառույցները՝ բազմագույն, բազմաբղետ, քաղաքի համայնապատկերին չհամընկնող, մայրաքաղաքում՝ ավելի շատ, քան մարզային քաղաքներում, հիմնականում նույն ուղղվածությունն ունեն՝ առեւտրի եւ սպասարկման օբյեկտներ են: Չեմ ուզում խոսել օրինական կամ ապօրինի կառույցների մասին, որոնք սնկի պես աճում են մեր բնակավայրերում՝ աղավաղելով քաղաքների ու գյուղերի ընդհանուր դիմագիծը: Այսօր ուզում եմ անդրադառնալ «կցակառույց» անունով երեւույթին: Մինչ հոդվածը գրելը, զրուցեցի Վանաձորի նախկին քաղաքապետ **Սամվել Դարբինյանի** եւ քաղաքաշինության վարչության նախկին պետ **Արմեն Ջանազյան**ի հետ: Նրանք այսօր չեն պաշտոնավարում, պատասխանատվություն չեն կրում ընթացիկ որոշումների համար, սակայն հենց նրանց պաշտոնավարման տարիներին է տրվել կառուցապատման թույլտվությունների մեծագույն մասը, որոնց հետեւանքները տեսնում ենք հիմա:

Քաղաքներում ազատ հողատարածքներն այսօր գրեթե սպառված են: Եվ ահա՝ ընդլայնման համար լուծումը գտնվել է. խանութներն ու սպասարկման օբյեկտները սկսել են «կցվել» շենքերին՝ բառի ուղիղ իմաստով: Շենքերի պատերի տակ, մուտքի, ճանապարհների, բակերի հաշվին, երբեմն էլ՝ հուշարձան հանդիսացող կառույցների կողքին հանկարծ հայտնվում են նեղ ու երկար, թունելանման, վագոն-տնակ հիշեցնող շինություններ: Սա ոչ թե քաղաքաշինություն է, այլ՝ քաղաքախեղում: Ինչ են տալիս մեզ այս կցակառույցները: Հայաստանն առանց այդ էլ մի մեծ «հանրախանութ» է դարձել՝ բաց երկնքի տակ: Կցակառույցները, որպես կանոն, խանութներ են, դրանք արտադրական նշանակություն չունեն՝ ֆաբրիկա չեն, արտադրամաս չեն, աշխատատեղերի կայուն աղբյուր չեն, միայն խանութներ են ու սպասարկման օբյեկտներ, որոնք սպասարկման ու առեւտրի կարիք ունեցողներին բազմակի գերազանցում են: Փոխարենը՝ խլում են հանրային կենսատարածքը, նեղացնում բակերն ու անցուղիները, խոչընդոտում շտապօգնության ու հրշեջ մեքենաների մուտքը, խախտում շենքերի բնական լուսավորությունն ու օդափոխությունը, խաթարում միջավայրի գեղագիտական համայնապատկերը:

Վանաձորի նախկին քաղաքապետին հարցրի՝ ինչո՞ւ են նման թույլտվություններ տրվում: Պատասխանն էր. «Մեր համաքաղաքացիներն են՝ մի կտոր հաց վաստակելու հնարավորություն ենք տալիս»: Այս արդարացումը տարիներ շարունակ դարձել է քաղաքաշինական ամենախնդրահարույց որոշումների քողածածկույթը: Վանաձորի կենտրոնական՝ Հայքի հրապարակը եւ նրան շրջապատող կառույցները՝ մարզպետարանը, քաղաքապետարանը, «Գուգարք» հյուրանոցը եւ հարակից մի քանի բնակելի շենքեր, միասնական ճարտարապետական հրաշագեղ համալիր են կազմում, որը, ինչպես մայրաքաղաքի, Գյումրու հրապարակները, ՀՀ օրենքով համարվում է հուշարձանախումբ: Օրենսդրությամբ սահմանված է, որ նման տարածքներում արգելվում է կառուցապատումը՝ հուշարձանախմբին 20 մետր մոտիկ տարածքում: Սակայն քաղաքապետարանի արեւելյան հատվածում վեր է խոյացել նեղ ու երկար եռահարկ կառույց: Այն գտնվում է քաղաքապետարանի շենքից ընդամենը 2-2,5 մետր հեռավորության վրա: Լոռեցիք, զայրույթը կատակի վերածած, անմիջապես կնքեցին «կոնյուշնյա» (ձիանոց): Արդյունքը՝ սահմանափակված է քաղաքապետարանի գեղեցիկ շենքի առաջին երեք հարկերի բնական լուսավորությունը, նվազել է հրդեհային եւ արտակարգ իրավիճակների վտանգի դեպքում հրատապ օգնություն կազմակերպելու հնարավորությունը: Իրավաչա՞փ է սա, թույլտվություն կա՞: Պարզվում է՝ կա: Այդ թույլտվությունը ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից է, որն օգտվել է Վանաձորի քաղաքապետարանի լուռ համաձայնությունից, իսկ վերջինս կարող էր եւ պիտի ընդդիմանար: Չի ընդդիմացել: Այստեղ հովանավորչությունն ակնհայտ է: Եվ սա միայն իշխանությունների մեղքը չէ:

Կցակառույցների համար պատասխանատվություն են կրում ոչ միայն թույլտվություն տվող մարմինները, այլեւ նրանք, ովքեր ամեն կերպ ձգտում են ունենալ այդ կառույցները, երբեմն՝ ճնշմամբ, երբեմն՝ «ծանոթի միջոցով»: Եթե այդ մարդիկ իսկապես քաղաքացի լինեին եւ հարգեին իրենց համաքաղաքացիներին, պիտի մի պահ մտածեին. «Ինչ եմ անում. իմ քաղաքի տեսքն եմ խաթարում, հարեւանիս լուսամուտն եմ փակում, իմ բակի ճանապարհն եմ նեղացնում»: Բայց մտածողությունն այլ է. «Եթե ես չանեմ, ուրիշը կանի: Եթե ես չվերցնեմ, ուրիշը կգրավի»: Այս տրամաբանությամբ էլ քաղաքներն աղավաղվել են, ոչ մի կանոն չի պահպանվել, քաղաքի գլխավոր հատակագիծ գոյություն չունի. ով ինչ որտեղ ուզում՝ կառուցում է:

Իշխանությունները շեշտում են, որ կցակառույցները լուծում են սոցիալական խնդիրներ, ստեղծում են աշխատատեղեր: Այո, գործազրկության պայմաններում դա կարող է ժամանակավոր մեղմացում լինել: Սակայն կան հարցեր, որոնք չեն տրվում եւ ոչ մեկին չեն հետաքրքրում: Օրինակ, տվյալ կցակառույցը ներդաշնա՞մ է շրջակա միջավայրին, պահպանվո՞ւմ են գեղագիտական նորմերը, չե՞ն խաթարվում շենքերի բակային մուտքերը, քաղաքացիների ազատ տեղաշարժը կամ մյուս բնակիչների իրավունքները, չե՞ն գերազանցվում թույլատրելի մակերեսները:

Քաղաքի նախկին պատասխանատուների բացատրությունը հնչում էր այսպես՝ կցակառույցները ժամանակավոր են, ժամանակի ընթացքում կկատարեն իրենց դերը եւ կվերանան: Հուսանք, որ այդպես կլինի, բայց մինչ այդ որքան քիչ շենքեր կառուցեն, այնքան քիչ բան կունենանք վաղը քանդելու, մաքրելու ու շտկելու: Անգլիացիները կատակով ասում են՝ Լոնդոնը քանդվել ու կառուցվել է 17 անգամ: Բայց մեր քաղաքները չպետք է այդ ճանապարհն անցնեն՝ մենք այդքան հարուստ չենք եւ այդքան բեռ չպիտի թողնենք մեր ապագա սերունդների վրա:

*Դասական ճարտարապետության եւ կառուցապատման բոլոր կանոններն ու սկզբունքները մեր քաղաքներում ոտնահարված են:*

**Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ**

## Հոգեւորականից բացի ո՞վ կարող է զինվորին օրհնություն տալ կամ աղոթք անել

Օրերս դադարեցվեց Հայ առաքելական եկեղեցու կողմից բանակում նշանակված հոգեւորականների՝ գնդերեցների ծառայությունը: Հրամանն իր էջում հպարտորեն տեղադրել էր պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը: Իմացանք, որ գնդերեցներն այսուհետեւ կգործեն Գլխավոր շտաբի բարոյահոգեբանական վարչության համակարգմամբ: Մի քանի շաբաթ շարունակ մամուլը գրում էր, որ բանակի կորպուսների հրամանատարները, ՊՆ ղեկավարությունն «աշխատում» են գնդերեցների հետ, ստիպում, որ միանան Փաշինյանի հակակաթողիկոսական արշավին, սակայն 50 գնդերեցները մերժել են դա եւ հավատարիմ մնացել Մայր Աթոռին, որից հետո իշխանությունը որոշեց լուծարել ողջ կառույցը: Չնայած Պապիկյանը շաբաթներ առաջ վստահեցրել էր, որ բանակը չի խառնվում հակաեկեղեցական արշավին:

Իբրեւ թե հոգեւոր ծառայությունը չեն դադարեցնում, այլ ընդամենը վերակազմավորում են, սակայն այդ ծառայությունն այսուհետ մատուցելու են կրոնագետները, աստվածաբանները, որոնք չեն ենթարկվում Մայր Աթոռին: Կարող են ներգրավվել կարգալույծ հոգեւորականներ, կրոնական՝ աղանդավորական կառույցների անդամներ: Զրուցել ենք կրոնագետ **Վարդան Խաչատրյանի** հետ: «Իրականում՝ գնդերեցների ծառայությունը բանակային համակարգում ազգային ամբողջությունը պահելու խնդիր էր լուծում: Գնդերեցները, որպես այդպիսին, Հայ առաքելական եկեղեցու, որին դավանում է մեր հանրության 90 տոկոսը, ցավերն ամոքելու, ճգնաժամային իրավիճակներից նրանց դուրս բերելու, հոգեւոր սատարում տալու եւ բանակում որոշ առումով համակարգման աշխատանք տանելու համար էին: Նրանք իրականացնում էին կարեւոր ֆունկցիա: Այժմ ինչի՞ հիման վրա է այս փոփոխությունն իրականացվում: Հոգեւորականից բացի ո՞վ կարող է բանակում օրհնություն տալ կամ աղոթք անել, ես գոնե դա չեմ պատկերացնում, եկեղեցուց, հոգեւորականից բացի այդ գործառույթը դժվար թե ուրիշ մեկը կարողանա կատարել»,- ասում է կրոնագետը:

Գուցե մյուս կրոնական կազմակերպությունների՞ն ներգրավեն: «Նրանք այդքան շատ չեն: Կարող է լինել, ասենք, երեք հոգի «Կյանքի խոսք»-ից, երկուսը կարող է լինել հիսունականներից, չորսը կարող է լինել Եհովայի վկա, որոնք թեպետ հայտարարում են, թե իրենք զինատյաց են, սակայն, ով գիտի, կարող են եւ ներգրավվել պրոցեսներում: Բայց դա չի նշանակում, որ ազգային ինքնությունը սպասարկող կառույցից պետք է այսպես հրաժարվենք: Աստված մի արասցե, եթե վաղը պատերազմ սկսվի, ո՞վ է հոգեւորի մասին խոսելու այդ օրերին: Ենթադրենք, մեր օրինակն այսօր ամերիկյան բանակն է, արդյո՞ք այնտեղ հանվել է հոգեւորականների ինստիտուտը բանակից: Ասում են՝ Հայաստանը կրոնապետություն չէ, արդյո՞ք Ամերիկան կամ եվրոպական երկրները կրոնապետություն են»:

**Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

# ԻՆՉՈՒ ԷԻՆ ՍԻՈՆԻՍՏՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Գրիգոր ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆ

Որս՝ Գեւորգ Էմինին, 1970-ին հաջողվել էր 6 ամիս անցկացնել Միացյալ Նահանգներում: Ի թիվս շատերի, այնտեղ նա հանդիպել էր նաեւ սիոնիստական գլխավոր կազմակերպության ղեկավարին եւ զրուցելով նրա հետ հասկացել, որ այդ մարդը հիանալի գիտի … մեր պատմությունը: Երբ Էմինը զարմացած հարցրել է՝ ինչպե՞ս է, որ այդքան լավ գիտեք հայ ժողովրդի պատմությունը, գլխավոր սիոնիստը պատասխանել է. «Մենք ուսումնասիրում ենք հայոց պատմությունը, որպեսզի … չկրկնենք ձեր սխալները»:

Ստիպված ենք համաձայնել, որ ունեցել ենք սխալներ: Այլապես ինչո՞վ բացատրել, որ դարեր առաջ Հայաստանն այնքան հզոր էր, որ նույնիսկ Հռոմեական կայսրությունն էր մեզ հետ հաշվի նստում, իսկ այսօր ծվարել ենք մեր նախկին հայրենիքի այս փոքրիկ մասում: Հայաստանը նաեւ կայսրություն էր եւ ասիմիլացնում էր այլազգիներին, իսկ այսօր հայերին են ուծացնում: Մյուս կողմից, չեմ հասկանում. թե ինչ սխալների մասին է ակնարկել այդ սիոնիստը: Չէ՞ որ, երբ կարդում ես հայ պատմիչների, պատմաբանների, գրողների, այլեւայլ գործիչների գրվածքները, այնտեղ չկա հիշատակություն սխալների մասին: Հաղթանակներ են, ճիշտ է, մեծամասամբ՝ «բարոյական», բայց՝ հաղթանակներ: Նաեւ՝ դավաճանություններ, որոնք դարձել են մեր անհաջողությունների պատճառը: Մինչդեռ, ինչպես Գեւորգ Էմինն էր պնդում, որը շատ բանիմաց մարդ էր, մյուս ժողովուրդներն ունեցել են ոչ պակաս թվով դավաճաններ, քան՝ հայերը:

Կուզենայի, որ մենք եւս ծանոթանայինք սիոնիստների կողմից գրված իրական հայոց պատմությանը, որպեսզի չկրկնենք մեր սխալները: Չէ՞ որ պատմագիտության նպատակն ու իմաստը նաեւ դա է: Վերլուծել, բացահայտել անցյալի սխալները, որպեսզի դրանք չկրկնվեն:

Այսօր դժվար է ճշգրիտ պարզել, թե ինչն ինչպես է եղել, քանի որ հին Հայաստանում չկային լրատվամիջոցներ: Բայց ենթադրում եմ, որ մեր առաջնորդները մեզ տարել են սխալ ուղով: Դրա ապացույցը հայ ժողովրդի այսօրվա վիճակն է: Այն ժողովրդի, որը դեռ 19-րդ դարի վերջում, 20-րդ դարի սկզբում, ինչպես հայրս էր ասում, տարածաշրջանի շատ ժողովուրդների համեմատ ուներ ֆինանսական եւ մտավոր ավելի մեծ ներուժ եւ շատերից ավելի մեծաքանակ էր:

Հայաստանի երրորդ հանրապետության 34 տարվա կյանքն անցել է մեր աչքերի առջեւ, եւ մենք վկաներն ենք այն ամենի, ինչն արել են մեր առաջնորդները: Բայց չկան թույլ տրված սխալների վերլուծություններ: Մի կողմից, լուտանքներ են մրցակիցների հասցեին, մյուս կողմից՝ պատումներ սեփական հաղթանակների ու ձեռքբերումների մասին: Նույնիսկ պատերազմում մեր կրած պարտության պատճառներն են հայերի համար համարվել պետական գաղտնիք եւ արդեն իսկ սկսել են խոսել այն մասին, որ սխալներ չեն եղել: Շուտով, երեւի, կսկսեն ասել, որ մենք տարել ենք բարոյական հաղթանակ: Որ 120 հազար արցախցիների դեպորտացիան հենց հաղթանակի վկայությունն է: Մինչդեռ մեզ համար գործող պետական գաղտնիքն ամենեւին էլ հանելուկ չէ աշխարհի համար: Այնտեղ արդեն ամեն ինչ վերլուծել են, չեն կրկնում մեր սխալները, եւ 44-օրյա պատերազմի փորձը կիրառվել է հետագա բոլոր հակամարտություններում: Մասնավորապես, լայնորեն սկսել են օգտագործել դրոններ, որոնք այսօր ունեն վճռորոշ դերակատարում:

Ի դեպ, ըստ լրատվամիջոցների, մինչ պատերազմը Իսրայելը մեր իշխանություններին առաջարկել էր գնել իր արտադրած ԱԹՍ-ները, որոնք աշխարհում համարվում են լավագույններից: Բայց ստացել էր մերժում, թե մենք ունենք հուսալի հակաօդային պաշտպանություն, մեզ պետք չեն այդ խաղալիքները: Իսկ Ադրբեջանը չէր մերժել եւ շահել էր:

Հասկանում եմ մեր հին պատմիչներին, որոնց կյանքը կախված էր թագավորներից, ֆեոդալներից, եկեղեցուց: Հասկանում եմ նաեւ այսօրվա մեր պատմաբաններին, որոնց ֆինանսավորումը եւ բարեկեցությունը կախված են երկրի տերերից, կուսակցապետերից, տարբեր հիմնադրամներից: Այդ պատճառով էլ ցանկանում եմ ծանոթանալ սիոնիստների կողմից գրված մեր իրական եւ անաչառ պատմությանը, որն օգնեց հրեաներին՝ զերծ մնալ հայերի սխալներից: Օգնեց իրականացնել իրական հրաշք: Այն է՝ ստանալով բոլոր կողմերից թշնամիներով շրջապատված, բանակից, արդյունաբերությունից, գիտությունից, նորմալ գյուղատնտեսությունից եւ ենթակառուցվածքներից, ջրից, հանքերից զուրկ հետամնաց մի տարածք՝ ստեղծել առաջադեմ արդյունաբերություն, ստեղծել նույնիսկ ծովի ջուրն օգտագործող՝ աշխարհի լավագույններից մեկը համարվող գյուղատնտեսություն, ստեղծել նախանձելի գիտություն եւ հզոր զինված ուժեր ունեցող Իսրայել պետությունը:

Բանակը, որտեղ ապահով ծառայում են նույնիսկ աղջիկները, չնայած փոքրաթիվ է՝ համեմատած հակառակորդների բանակների հետ, սակայն հաղթանակներ է տոնել բոլոր պատերազմներում: Հեռանկարում էլ պատրաստվում է խեղճացնել Երուսաղեմը «վերադարձնել» սպառնացող Էրդողանին (ի դեպ, Սիրիայի տարածքում Թուրքիայի զինուժն արդեն իսկ 2 անգամ խուսափել է մարտի բռնվել իսրայելցիների հետ):

Մինչդեռ մենք, Սովետական Հայաստանից ժառանգելով հզոր արդյունաբերություն, լավ գյուղատնտեսություն եւ գիտություն, հարուստ հանքեր եւ ջրային պաշարներ ունեցող երկիր, երեք տասնամյակի ընթացքում հաջողացրինք ոչնչացնել մեր արդյունաբերությունը, փչացնել գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողերի 46 տոկոսը, ցամաքեցնել Արարատյան դաշտավայրի ընդերքում գտնվող խմելու ջրի ստորգետնյա ծովը, որը բնությունը ստեղծել էր հազարամյակների ընթացքում: Հաջողացրինք այնքան աղտոտել Սեւանը՝ միաժամանակ ոչնչացնելով ժամանակին լիճը մաքրելու նպատակով այնտեղ բնակեցված խեցգետիններին ու ձկներին, որ ջուրը ծածկվեց կապտականաչ ջրիմուռներով ու դարձավ թունավոր: Փչացրինք նաեւ գետերը՝ կառուցելով շատ ՓՀԷԿ-ներ: Բացի այդ, պարտվելով պատերազմում՝ խեղճացանք ու դարձանք հակառակորդի քմահաճույքի եւ պարտադրանքի առարկա:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 4.02.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

# ԻՆՉ ԿՈՌԽՎԻ ԹԲԻԼԻՍԻ-ԿԻԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ուկրաինան Վրաստանում նոր դեսպան ունի: Վլադիմիր Զելենսկին այդ պաշտոնին նշանակել է Միխայիլ Բրոդովիչին: Նոր դեսպանը հայտնի քաղաքական անձ կամ բիզնես շրջանակների ներկայացուցիչ չէ: Նրա նշանակումը, հետեւաբար, առանձնապես քաղաքական հետաքրքրություն չպետք է ներկայացներ: Հայտնի է, որ Բրոդովիչը վերջին երեք տասնամյակներին եղել է Ուկրաինայի ԱԳ նախարարության աշխատակազմում՝ դիվանագիտական ծառայությունը սկսելով թարգմանչի աշխատանքից: Աչքի ընկնող որեւէ դրվագ իր կենսագրության մեջ չի ունեցել: Թերեւս միայն այն, որ 2015-22 թվականներին եղել է Սլովենիայում ուկրաինական դեսպան, սակայն, ամեն դեպքում, այս նշանակումը, ինչպես գրում է Սերգեյ Մարկեդոնովն իր վերլուծականում, հետաքրքիր է, եթե հիշենք, որ 2022-ի մարտից ի վեր Կիեւը Թբիլիսիում դեսպան չի ունեցել:

Թբիլիսիում Կիեւի վերջին դեսպանը՝ Իգոր Դոլգովը, աշխատանքից ազատվել է բավական կոպիտ պատճառաբանությամբ՝ «պարտականությունների ոչ արդյունավետ կատարման համար»: Ու դրանից հետո ավելի արդյունավետ աշխատող դիվանագետ Կիեւում կարծես թե չկարողացան գտնել՝ Թբիլիսի գործուղելու համար, մինչ այս նշանակումը: Իսկ ավելի ընդհանուր համապատկերով եթե նայենք, Թբիլիսի-Կիեւ հարաբերությունները փչացան հենց 2022 թվականին: Թեեւ դրանից առաջ նրանք սերտորեն համագործակցում էին: Եվ Վրաստանին, եւ Ուկրաինային խոստացվել էր ՆԱՏՕ-ի անդամակցություն: Երկու երկրները մաս էին կազմել Արեւելյան գործընկերության, զուգահեռաբար քայլում էին դեպի ԵՄ-ի հետ ասոցացման եւ Շենգենի երկրների հետ առանց վիզային ռեժիմ:

Ռուս-ուկրաինական պատերազմը հարաբերությունների համար դարձավ գայթակղության քար, որից փոխվեց ամեն բան: Վրաստանը թեեւ աջակցեց Ուկրաինային, սակայն շարունակեց բիզնեսը Ռուսաստանի հետ: Դիվանագիտական հարաբերություններ չհաստատվեցին, իհարկե, Մոսկվայի եւ Թբիլիսիի միջեւ, սակայն տնտեսական կապերն ու օգուտները շարունակեցին մնալ իրատեսական քաղաքականության շրջագծում: Ուկրաինական իշխանություններն այս մոտեցումը չընդունեցին: 2023-24 թվականին Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին աջակցություն հայտնեց Վրաստանում ընթացող բողոքի ցույցերին եւ իշխող կուսակցության հակառակորդներին դեմոկրատական հաջողություններ մաղթեց: Եվ մեկ անգամ չէ, որ համերաշխություն հայտնեց նախկին նախագահ Միխայիլ Սահակաշվիլուն, նաեւ՝ փաստացի արտաքսեց վրացական դեսպան Գեորգի Զաքարաշվիլուն: Ու հիմա, երբ նոր դեսպան է նշանակվել, հարց է առաջանում, թե նախկին դաշնակիցների միջեւ հարաբերություններն արդյոք կբարելավվե՞ն: Դժվար թե:

Եվ Ուկրաինան, եւ Վրաստանը շատ հարցերում շարունակում են պահպանել տեսակետների տարբերությունը: Ուկրաինան շարունակում է իր ապագան տեսնել համապարփակ արեւմտականացման մեջ՝ դա համարելով իր ռազմավարական նպատակը: Վրաստանը փորձում է Արեւմուտքի հետ ընտրողական հարաբերություններ ունենալ: Թերեւս պատճառն այլ է: Պարզապես Կիեւը, որպես Արեւմուտքի լավագույն գործակատար, փորձում է սեփական աչքերն ու ականջները ունենալ Թբիլիսիում, որը հարկ եղած դեպքում գուցեեւ օգտակար կլինի նաեւ Եվրամիությանն ու Միացյալ Նահանգներին:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am